

7-8 (297-298)
16.03.2012թ.
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմնասրահին եւ գիրար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар ●

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

● Lusarar

ՀԱՋՈՐԴ ՓՈՒԼԸ՝ ՀՀ ԵԶՐԱՓԱԿԻՉ

Ավարտվեց 2011-2012 ուսումնական տարվա դպրոցական առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը, որն անց է կացվել 11 առարկաներից:

Արդյունքների հանգամանակից վերլուծությունը կներկայացնենք մեր թերթի առաջիկա համարներից մեկում: Իսկ այժմ բավարարվեց նրանց անունները թվարկելով, ովքեր առավելագույն հնարավորից վաստակել են ամենաբարձր միավորները:

Արմինե Դուրյանյան - Մարտունու թիվ 1 միջնակարգ հոսքային դպրոց, 12-րդ դաս.

Հերմինե Բաղդասարյան - Ստեփ. թիվ 11 ավագ դպրոց, 12-րդ դաս., 15 միավոր՝ հայոց լեզու:

Լիլիթ Հարությունյան - Մարտակերտի թիվ 1 միջնակարգ հոսքային դպրոց, 10-րդ դաս.

Աստղիկ Սողոմոնյան - Մարտունու շրջանի Բերդաշենի միջն. դպրոց, 11-րդ դաս., 16,25 միավոր՝ հայ գրականություն

Վարդանով Տիգրան - Ստեփ. թիվ 11 ավագ դպրոց, 11-րդ դաս.

Լարիսա Գևորգյան - նույն դպրոցի 10-րդ դաս., 17 միավոր՝ օտար լեզու (անգլերեն)

Անահիտ Բաբայան - Ստեփ. թիվ 3 միջն. դպրոց, 10-րդ դաս., 33,5 միավոր (46 հնարավորից)՝ ռուսաց լեզու

Էլլարա Հայրապետյան, Ասկերանի շրջանի Խաչմաչի միջն. դպրոց, 10-րդ դաս., 17 միավոր՝ պատմություն:

Արմեն Աթանեսյան - ֆիզմաթ դպրոց, 11-րդ դաս., 15 միավոր,՝ մաթեմատիկա:

Անուշ Ղահրամանյան - Ստեփ. թիվ 11 ավագ դպրոց, 12-րդ դաս., 31 միավոր (50 հնարավորից)՝ կենսաբանություն:

Անի Ղազարյան - Մարտունու շրջանի Գիշու միջնակարգ դպրոց, 9-րդ դաս., 31 միավոր (59 առավելագույնից)՝ քիմիա

Մերի Զաքարյան - ֆիզմաթ դպրոց, 10-րդ դաս., 14 միավոր՝ ֆիզիկա

Վալերի Բեգլարյան - ֆիզմաթ դպրոց, 11-րդ դաս., 22 միավոր (40 հնարավորից)

Արթուր Արրահամյան - Մարտունու շրջանի Գերհերի միջն. դպրոց, 12-րդ դաս., 16,75 միավոր՝ աշխարհագրություն

Առավելագույն միավորներ հավաքած արցախցի դպրոցականները ԼՂՀ ԿԳ նախարարի հրամանով կմասնակցեն առարկայական օլիմպիադայի 33 եզրափակիչ փուլին: Մեկնարկը կտան պատանի մաթեմատիկոսները՝ մարտի 23-ին:

Մաղթում ենք լավագույն արդյունքներ:

«Լուսարար»

Անցած տարվա մայիսին ԼՂՀ կրթության և գիտության նախարարության և «Այբ» կրթական հիմնադրամի միջև ստորագրված Հուշագրով «Կենդուրու» մաթեմատիկական միջազգային մրցույթն Արցախում անցկացնելու կանաչ ճանապարհի ստացավ: Ինչպես գիտենք, «Կենդուրուն» Արցախ մուտք գործեց երեք տարի առաջ. առաջին տարում՝ փորձնական կարգով, երկրորդ անգամ՝ ավելի հաստատուն քայլերով, իսկ այս տարի՝ որպես լիիրավ անդամ. մեկն աշխարհի այն մի քանի տասնյակ երկրների շարքում, ովքեր միացած լինելով «Կենդուրու»՝ մաթեմատիկա բոլորի համար միջազգային շարժմանը, յուրաքանչյուր տարվա մարտի երրորդ հինգշաբթի օրը մասնակցում են մրցույթին:

Մարտի 15-ին անցկացվեց 2012թ. «Կենդուրուն»: Այս հետաքրքիր խաղ-մրցույթը լավ արձագանք գտավ արցախցի դպրոցականների շրջանում: Այդ մասին հենց թվերն են հուշում. եթե առաջին տարում փորձնական լինելով մասնակցել են Ստեփանակերտ քաղաքի 120 դպրոցականներ, ապա երկրորդ տարում՝ 608, իսկ այս տարի հայտ է ներկայացրել 1484 աշակերտ: Մեծացել է նաև նրա աշխարհագրությունը: Ճիշտ է, զուտ կազմակերպչական առումով առայժմ հնարավոր չէ հանրապետության բոլոր դպրոցներն ընդգրկել, բայց կազմակերպիչները քայլ առ քայլ գնում են դրան: Մասնակիցներից 890-ն են Ստեփանակերտից, մյուսները շրջանների դպրոցներից են: Ավելին ասենք, կան երեխաներ, ինչպես ասենք Հաթերք, Առաջածոր, Վանք, Շոշ և այլ գյուղերից, որոնց դպրոցներն ընդգրկված չլինելով՝ իրենց ցանկությամբ մայրաքաղաքի աշակերտների կազմում մասնակցել են մրցույթին: Ինչի՞ մասին է սա խոսում. նրա, որ մեր երեխաները հետաքրքրություն են ցուցաբերում մաթեմատիկայի նկատմամբ, ինչն էլ մրցույթի գլխավոր նպատակն է: Այստեղ չեն պահանջվում մաթեմատիկական բանաձևերի, բարդ հաշվումների իմացություն, որը , այսպես ասած, խրտուեցնում է շատ երեխաների և վախի կամ անտարբերության զգացում առաջացնում նրանց նեշ: Մրցույթի գլխավոր զենքը տրամաբանությունն է, ճկուն մտածողությունը, արագ կողմորոշվելը և նման այլ հմտություններ: Հատկանշիչներ, որոնցով զենեփակորեն օժտված է արցախցին: Նաև այն, որ մասնակիցների գերակշիռ մասը 3-4-րդ և միջին դասարանների աշակերտներ են, դարձյալ ասում է մրցույթին մասնակցելու նրանց մեծ ցանկության մասին: Այսօր դպրոցական առարկայական օլիմպիադաներն անց են կացվում բարձր դասարանցիների շրջանում և ինչ-որ տեղ փոքրերը դուրս են մնում: Եվ ահա «Կենդուրուն»/ինչպես նաև նրա կրտսեր եղբայր «Ռուսական արջուկը»/ նման հնարավորություններ ընծեռում են նաև փոքրերին:

Մրցույթի պայմանները և ընթացակարգն անփոփոխ են: Բոլոր մասնակիցները ստանում են փոքրիկ հուշանվերներ՝ որպես գեղեցիկ հուշ մրցույթից: Մրցույթի տևողությունը 75 րո-



պե է: 3-4-րդ դասարանցիները առավելագույնը կարող են վաստակել 96, իսկ մյուսները՝ 120 միավոր: Պատասխանների թերթիկները կստուգվեն և կամփոփվեն «Կենդուրուի» համար գրված համակարգչային ծրագրի օգտագործմամբ: Կազմակերպիչների տեղեկացմամբ, մայիսի առաջին կեսին յուրաքանչյուր մասնակից դպրոց կստանա ամփոփ հաշվետվություն իր աշակերտի արդյունքների մասին: Իսկ մայիսի երկրորդ կեսին, ինչպես միշտ, նախատեսվում է մրցանակաբաշխություն:

«Կենդուրու» մաթեմատիկական օլիմպիադան, որն արդեն երրորդ տարին է՝ կազմակերպում ենք, բավականին հետաքրքրություն է առաջացրել դպրոցականների շրջանում:

Հաջորդ տարի կընդգրկենք բոլոր դպրոցները: Միջազգային այս օլիմպիադան մի նպատակ է հետապնդում՝ հետաքրքրություն առաջացնել մաթեմատիկա առարկայի նկատմամբ: Հանձնարարությունների բնույթն այնպիսին է, որ կապված են զուտ տրամաբանության հետ. որքան առարկաների մեջ ավելի են խորացված, մտածելու ունակ են, այնքան մեծ արդյունքների են հասնում: Կարևոր հանգամանք է այն, որ աշխարհի բոլոր պետությունները, որոնք ընդգրկված են այս ցանցում, միևնույն օրը, միևնույն ժամանակ անց են կացվում միևնույն ժամանակ, առաջադրանքները կազմվում են միևնույն կոլեկտիվի կողմից: Կարևորն այն է, որ լավագույն արդյունքներ ցուցաբերած ախակերտ-

ները խրախուսվում են կազմկոմիտեի կողմից: Սահմանվում են լավագույն մրցանակներ, իսկ ամենաբարձր արդյունքները ցուցաբերած աշակերտները վաստակում են լավագույն ճանաչարան տանգահանալու ուղեգիր: Սա, իհարկե, իր դրական ազդեցությունը կունենա մաթեմատիկայի նկատմամբ երեխայի հետաքրքրությունների զարգացման գործում:

Սեփ. լրատվություն



ԽՐԱԽՈՒՄՎԵԼ ԵՆ ԱՐՑԱԽԻ ԵՎ ԶԱՎԱԽՔԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը և «Տաշիր» բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչ Արտակ ճաղարյանը ՀՀ տարբեր բուհերի ավելի քան 200 լավագույն ուսանողների՝ Ջավախքի և ԼՂՀ քա-

ղաքացիների, տրամադրել են միանվագ դրամական աջակցություն՝ յուրաքանչյուրին 200 000 դրամի չափով:

Ա. Աշոտյանը նշել է, որ հետագայում «Տաշիր» բարեգործական հիմնադրամի աջակցու-


թյամբ իրականացվող ծրագրում նմանատիպ խրախուսանք է նախատեսվում նաև Ջավախքի, Արցախի և ՀՀ լավագույն ուսուցիչների համար:

www.edu.am

ԸՆԹԱՑՔ

ՋՈՒՐՆ Ե՛Վ ԿՅԱՆՔ Է, Ե՛Վ ՔԻՄԻԱ

Ընդօրինակման բաց դաս Այս խորհրդավոր վերնագիրն էր կրում բաց դասը քիմիայից, որը կազմակերպել էր Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի Իրա Թադևոսյանը:



Դասը սկսվեց փոքրիկ տեսաֆիլմով. հանգիստ հոսում է գետը, ու հոսող ջրի այդքան հանգստացնող, այդքան տրամադրող ձայնը տարածվեց դասարանում:

Ուսուցչուհին իր խոսքը սկսեց Անտուան դը Սենտ Էքզյուպերիի բառերով, որը մի անգամ անապատում հրաշքով փրկվելով, գրել էր. «Դու չունես ոչ համ, ոչ գույն, ոչ հոտ: Քեզ հնարավոր չէ նկարագրել: Քեզնով մենք հագնում ենք, առանց հասկանալու, թե ինչ էս դու: Դու ոչ միայն անհրաժեշտ ես կյանքի համար, դու կյանք ես: Քեզ հետ մեր ողջ գոյության մեջ տարածվում է երջանկությունը, որը հնարավոր չէ բացատրել միայն մեր հինգ զգայարաններով: Քո գթասրտությամբ կրկին բացվում են սրտի ցամաքած

աղբյուրները: Դու ամենամեծ հարստությունն ես»:

Ուսուցչուհին շարունակեց միտքը. «Երկիրն արեգակնային համակարգի միակ մոլորակն է, որտեղ կա կյանք: Կյանք կա միայն *Մրա* շնորհիվ: Մենք հիանում ենք մեր մոլորակի գեղեցկությամբ, բազմազան գույների խաղով: Իրականում գույների այդ սովորական ու միշտ անսովոր սիմֆոնիան պարտական է *Մրա*՝ լուսի կլանման ու ցրման զարմանալի հատկությանը: Այն մեծ նկարիչ է: Ուղեկցում է մեր կյանքի յուրաքանչյուր ակնթարթ: Այն աշխարհի ամենամեծ հարստությունն է, և կենդանի օրգանիզմները կիսում են իրար միջև այդ հարստությունը»:

Ապա դիմեց աշակերտներին. «Ինչի՞ մասին է խոսքը»: Եվ սկսվեց հարցերի տարափոք: Աշակերտներն առանց կաշկանդվելու պատասխանեցին բոլոր հարցերին:

Իր գեղեցիկ կեցվածքով, ինքնավստահ



պահվածքով և հմայիչ ու համոզիչ խոսքով ուսուցչուհին դասը վեր էր ածել փոքրիկ թատրոնի, որտեղ իրար էին հաջորդում պատկերները՝ ջրի հատկության վերաբերյալ լուծումները: Հանձնարարած խմբային աշխատանքները երեխաներն ավարտեցին շատ արագ և կարողացան իրենց պատասխաններն արտահայտել նաև պատկերավոր ձևով՝ օգտագործելով համակարգիչը:

Բոլոր ուսուցիչներին շատ դուր եկավ դասը, որը հագեցած էր գիտելիքներով, հետաքրքիր փաստերով, ատույթներով ու դարձվածքներով, ինչու չէ, նաև հումորով: Այդ դասը մեզ ինչ-որ լավ, աննկարագրելի վիճակ հաղորդեց:

Բայց ամենաերջանիկն ուսուցչուհին էր, ում համար աշխատանքը ոչ թե ծանր բեռ է, այլ հաճույք: Նա աշխատում է ոգևորված, սիրով ու նվիրումով: Նրա համար սիրելի աշխատանքը երջանկության աղբյուր է, դեղամիջոց, սնունդ, ինքնահաստատման միջոց: Իրա Թադևոսյանը լավ տիրապետում է իր մասնագիտությանը, և աշխատանքը նրա էությունն է, նրա կյանքի իմաստը: Ոչ գիտությունը, ոչ արվեստը սիրողականություն և կիսատպրատություն չեն հանդուրժում, նրանք պահանջում են անդամաճան, անմնացորդ նվիրվածություն, արհեստավարժություն և գիտելիքների խոր իմացություն: Մանկավարժությունը և՛ արվեստ է, և՛ գիտություն: Իրա Թադևոսյանը լավ մանկավարժ է և լավ մասնագետ:

Կուրա ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Կենսաբանության քաղաքային
մեթոդիավորման նախագահ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԱՌՕՐՅԱՆ

Արհեստ սովորիր, մի՛ լինիր նազուկ,

Արհեստն է մարդուն ոսկե բիլազուկ:

Այս տողերի հեղինակը համճարեղ բանաստեղծ Հովհաննես Հիրազն է, որի աշխատանքային գործունեության հիմնաքարը եղել է արհեստը:

Ճիշտ է, մենք ապրում ենք զարգացած տեխնիկայի դարում, բայց չպետք է մոռանանք այն արհեստները, որոնց շնորհիվ մեր ապուլապներն իրենց շեն օջախներն են պահել: «Փեշակ ունեցող մարդը անոթի չի մնա» կամ՝ «Սովը նայում է աշխատավորի տան կողմը, բայց վախենում է ներս մտնելի»։ այս ասացվածքների մեջ թաքնված է ժողովրդական իմաստությունը: Արհեստը մարդու մեջ ձևավորում է այնպիսի առաքինություններ, ինչպես՝ մտքի սրություն, ձեռքի հմտություն, նպատակին հասնելու կամք և ձեռներեցություն:

Կարևորելով արհեստի ուժն ու գիտակցելով, թե այն ինչ մեծ նշանակություն ունի մեր կյանքում, ուղք դրեցի Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանի շենին: Ինձ դիմավորեցին ուսումնարանում սովորող պատանիների ու աղջիկների խանդավառ դեմքերը: Առաջին հարկում լսվում էր հաստոցների ձայնը: Արտադրական պրակտիկայի ժամ էր: «Ատաղծագործություն և մանրահատակագործություն» խմբի 3-րդ կուրսի սովորողները վարպետ Խ. Ջաքարյանի գլխավորությամբ պատրաստում էին փոքրիկ սեղանիկ: Իմ ուշադրությունը գրավեցին Սերգեյի, Լենսերի, Կարենի, Հայկի ու Արամի ձեռքերի հմուտ շարժումները: Տղաների որոշումը մեկն էր՝

կավարտեն ուսումնարանը, կծառայեն հայրենիքին, որից հետո կաշխատեն որպես ատաղծագործներ և



իրենց ավանդը կդնեն մեր հայրենիքի բարգավաճմանը:

Վեցերորդ տարին է, ինչ գործում է Ստեփանակերտի արհեստագործական, և այդ տարիների ընթացքում ուսումնարանը թողարկել է բազմաթիվ վարսահարդարներ, որոնցից շատերն աշխատում են վարսավիրանոցներում և գեղեցկության սրահներում: Ուսումնարանում այժմ առկա է վարսահարդարական չորս խումբ: «Մեր ապագա վարսահարդարները պատրաստ են իրենց գեղեցիկ արհեստով արժանի մատուցել մեր մայրերին ու քույրերին»,- ասում են վարպետները: Սուսաննայի և Երիկի, Շողերի և Մանուշի, Օքսաննայի և Իրայի կատարած գեղեցիկ սանրվածքներն ու հյուսած յուրահատուկ ծամերը մեկ անգամ չէ, որ հիացրել են իրենց այցելուներին:

Ուսումնարանում հմուտ վարպետների կողմից պատրաստվում

են նաև խոհարար-իրուշակագործներ: Գործող երեք խմբերում սովորում են շնորհաշատ աշակերտներ:

Արտադրական պրակտիկայի ժամերին նրանք պատրաստում են առաջին և երկրորդ կերակրատեսակներ, համով խորտիկներ, կարկանդակներ, ազգային կերակրատեսակները՝ խաշիկ և կուրկուտ: Ապագա խոհարարները գիտեն ճիշտ սպասքաղել սեղանները, ձևավորել

տորթերն ու աղցանները: Եվ ուրախվին այն է, որ այս տարի ԼՂՀ ԿԳ նախարարության և հովանավորների կողմից հատկացվել է գումար՝ պրակտիկ աշխատանքները պատշաճ մակարդակով անցկացնելու



համար:

Չէշտ չէ ապագա ավտոփակագործների աշխատանքը, որովհետև նրանք քաջ գիտակցում են, որ իրենց կատարած անգամ աննշան սխալը կարող է ճակատագրական լինել մեքենաների և վարորդների համար: Ափսոս, չկարողացա տեսնել ապագա ավտոփակագործներին, որովհետև նրանց պրակտիկայի օրն էր, իսկ ավտոփակագործների արտադրական փորձուսուցումն անց է կացվում ուսումնարանից դուրս:

Մեր զարգացող երկրին այսօր, առավել քան երբևէ, անհրաժեշտ են շինարարներ: Այդ սկզբունքով են աշխատում ուսումնարանում գործող շինարարական երկու խմբերում դասավանդող վարպետները: Ապագա շինարարների ճիշտ դրած ամեն մի քար մի մեծ խթան է մեր հայրենիքի բարգավաճման համար:

Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանում գործում է «Համակարգիչների շահագործում» խումբը: Ապագա օպերատորներից շատերն ունեն բարձրագույն կրթություն, բայց նպատակահարմար են գտել տիրապետել նաև օպերատորի մասնագիտությանը: Պարապմունքներն անց են կացվում տեխնիկայի ամենավերջին ձևով կահավորված համակարգչային դասարանում:

Շատերն են վկայում, որ ժամանակին է վերաբացվել Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանը: Եվ ցանկալի կլիներ, որ այնտեղ գործող խմբերի շարքը համալրվեր այլ մասնագիտություններով, որոնց կարիքը մեր երկիրը շատ ունի:

Մանուշ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱրՊՀ Լր. 4-րդ կուրս

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՌԻՍՈՒՑՅԻՆ

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սովորողների կողմից պատմական նյութերի յուրացումն առավել ապահովելու գործունե մեծ է նաև այլընտրանքային պատմության դերը: Այն լրացուցիչ ու պատկերավոր նյութերի միջոցով համեմուն է հարդորվող թեման, նպաստում դրա երկար մտապահմանը և հիշողության ամրապնդմանը: Այսպես օրինակ միջին դասարաններից 7-րդ դասարանի դասընթացը մեկ նախադասությամբ աշակերտին է հարդորում ռազմատենչ հոների (իմա՝ խազարների) մասին, բայց ոչ մի խոսք չի հարդորում նրա երկարամյա առաջնորդ Աբիլլայի մասին: Ուստի, այլընտրանքային պատմության խնդիրն է մանրամասնել այդ պատմական պերսոնաժի և նրա տոհմի պատմությունը, ներկայացնել նրա հետ կապված ռազմական հանրահայտ կռվանքները:

Սովորողներին հարդորել, որ Աբիլլան 430, 440, 458 թթ. հարձակվել է հռոմեական կայսրության վրա (թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան), ուներ կես միլիոնանոց զորք, գրավել է Գալիան: Նա այն ժամանակ 21-22 տարեկան էր (կարծեք Նապոլեոնի նախատիպը), երբ իր եղբոր հետ գրավեց Արևելյան Հռոմեական կայսրությունը և այնտեղից թալանեց տարավ 700 ֆրանկ ոսկի: Աբիլլայի թափը դանդաղեցրեց Հռոմեական կայսրության կայսր Թեոդորոսը, որը 432թ. Բյուզանդա-հունական պայմանագրի առթիվ ասել է, թե «Սա պատերազմից ավելի լավ է»:

Աշխարհի տարբեր պատմաբաններ միանգամայն հակասական գնահատականներ են տալիս Աբիլլային:

«Նա պարզ առաջնորդ էր, նույնիսկ հոգատար էլ», - գրում է մեկը:

«Նա չէր սիրում գովեստը իր անծի նկատմամբ, որի համար էլ քիչ էր մնում սպանել մի նկարչի և մի պոետի, որոնք հանդգնել էին աստվածացնել իրեն», - գրում է մեկ ուրիշը:

«Նա դաժան էր, կրակի մատնեց Գալիայի քաղաքները և գյուղերը», - գրում է մի ականատես:

Անգլիացիներն առայսօր ատում են Աբիլլային և Հիտլերին համեմատում են նրա հետ, իսկ գերմանացիները՝ ընդհակառակը, նրան անվանում են խաղաղ, իմաստուն առաջնորդ, իսկ մենք՝ հայերս, նույնպես նրան բարձր ենք գնահատում այն պատճառով, որ նա չներժեց Վարդան Մամիկոնյանին՝ պարսիկների հետ ունենալիք մեր պատերազմում մեզ օգնելու խոստում տալու համար, որ իրոք, մի որոշ չափով արտահայտվեց մեր հակառակորդի վրա կատարած ճնշման մեջ (ճորտ-Պահակի վրա):

Աբիլլան իր հետագա մեծածավալ հարձակումներից չէր հրաժարվի:

Եթե ժամտախտը չստղոսկեր նրա բանակը և մահ չսփռեր:

Եթե Հռոմի այն ժամանակվա պապ Լիո Առաջինի հորդորները չլիներին:

Եթե չլիներ Բյուզանդիայի կայսր Վալենտինի և Աբիլլայի միջև կնքված խաղաղության պայմանագիրը:

Եթե Աբիլլան չամուսնանար չքուստ Ինդիանայի հետ (453թ.), որն օգնեց, որ Եվրոպայի չավերվի կամ **եթե** Գալիայի Օրինաս քաղաքի մոտ նրա կրած պարտությունը չլիներ: Այդ ճակատամարտը խիստ ջլատեց Աբիլլայի ուժերը, և նա դադարեցրեց իր հետագա արշավանքները դեպի Ֆրանկների և սաքսերի երկիրը:

Հոներ-խազարների ավերիչ արշավանքներն Աբիլլայի մահից հետո գուցե թե շարունակվեին, **եթե** նրա չորս որդիները, որ ծնունդ էին առաջին կին Ալիսայից, հոր պես կատարյալ լիներին: Այդ եթե-ների շարքին են դասվում նաև Հուլիոս Կեսարի կյանքին վերաբերող մի շարք դեպքեր: Ասենք, **եթե** Հուլիոս Կեսարն ընթերցած լիներ պատգամախոսի կողմից իրեն տրված երկտողն այն մասին, որ այդ օրը նրան մահ է սպասվում իր իսկ առանձնասենյակում, նա կգոչաշանար և չէր գնա սեռատի միստ, ուր հակառակորդների կողմից պատրաստված էր նրա սպանության նախճիրը:

Եթե Հուլիոսն առատաձեռն չգտնվեր և իր այրի նախնուհուն չընծայեր մի մեծ մարգարիտ, որի արժեքով նրա որբ տղա Գլուտոսը 135 նավակներ չէր գնի, անձնական զորք չէր պահի, բարձրագույն զինվորական չէր դառնա և չէր հանդգնի Կեսարի դեմ իր սուրն առաջինների շարքում մերկացնել ու նրան հասցված 14 հարվածներից երկուսի հեղինակը դառնալ:

Եթե Ալեքսանդր Մակեդոնացին, որ Մերձավոր Արևելքում և Փոքր Ասիայում կառուցեց ինը քաղաքներ ու կոչեց իր անունով և վաստակեց «Կառուցող զորավար» անունը, մի ինչ-որ վարձակ կնոջ պահանջով չվառեր 29 մեծ ու փոքր քաղաքներ, պատմության մեջ «Կառուցող-նշխարհողի» անուն չէր վաստակի, ու ստվեր չէր ընկնի նրա հեղինակության վրա:

Անդրադառնալով մեկ ուրիշ թեմայի՝ «Թաթար-մոնղոլների արշավանքներին», նշենք «եթե» շարժակալի «փրկարար» բնույթն այս պարագայում: Հայտնի է, որ մոնղոլների արշավանքներից կործանվել են շատ երկրներ, տուժել են միլիոնավորները, որոնք խոտի պես հնձվել են, խաթարվել են շատ ճակատագրեր: Հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցի 5-6 տարեկան էր, որ 800 տարի առաջ սկսվեց մոնղոլների արշավանքը: Գրավելով աշխարհի արևելքը, մոնղոլները շարժվեցին դեպի արևմուտք և հասան Ավստրիա: Լեհ գրող-պատմաբան Սենկևիչի գրքից մեզ է հասնում այն միտքը, թե մոնղոլների սպառազինության աստիճանը որքան ահարկու էր, իսկ եվրոպացիներից՝ թույլ ու թեթև: 1241թ. Լեհաստանը խիստ տուժեց մոնղոլներից: Չնայած լեհերն ուժեղ էին, բայց ջախջախվեցին: Էլ չենք խոսում ռուսների մասին, որ մասնատված էին մանր իշխանությունների, որ պատճառ դարձավ մոնղոլների առաջ նրանց խոնարհվելու:

Մոնղոլների հաջողությունների դրդապատճառների մեջ կարևոր էր այն, որ նրանք գերի չէին վերցնում և

գրավում էին միայն տարածքներ, թալանում եղած ինչքը: Պատմաբանները միշտ ցանկացել են պարզել այն հարցը, թե ինչու մոնղոլական բանակի զինվորը երկու ծի ուներ: Պարզվեց, որ մոնղոլը դա անում էր նրա համար, որպեսզի անընդհատ առաջ գնա: Նրանք երկու օրում Հունգարիայից հասան Ավստրիայի մայրաքաղաք Վիեննա: Եվ մորեխների նման շրջապատեցին հայտնի քաղաքը:

Մոնղոլները Ալ. Մակեդոնացու նման մի լավ բնավորություն ունեին. պահանջում էին հանձնվել: Վիեննայի ամեն մի քաղաքացի գզում էր, որ մահ է սպառնում, բայց առավել Ավստրիայի զինվորները տեսնում են, որ մոնղոլները հետ-հետ են գնում: Ի՞նչն էր պատճառը: Մոնղոլների թիվ 1 ղեկավար Ուզեդեյի մահը, որի եղբայր հրամանատարը հրամայել էր իր զորքին հետ գնալ: Ուրեմն, **եթե** չմահանար Ուզեդեյը, ի՞նչ կլիներ Եվրոպայի վիճակը: Երևի իսլամացվեր Եվրոպան, եզրակացնում են շատ պատմաբաններ: Ասում են՝ Ուզեդեյի մահը փրկեց Եվրոպան: Բայց մոնղոլների նվաճման հետևանքներն էլ զգալի բացասական էին. չէ՞ որ այժմվա Եվրոպայի բնակչության 10 տոկոսը՝ մուսուլման ազգաբնակչության առկայությունը, դրա ապացույցն է: Կարլ Մարքսը, ուսումնասիրելով այդ շրջանի պատմությունը, գրել է. «Մոնղոլների արշավանքից Ասիան և Եվրոպան զգազվեցին աֆրիկացու մագերի պես»: Իսկ մի ուրիշ դեպքում նա ասել է. «Նրանց ձիերի սմբակների տակի խոտը չէր բուսնում»:

Մոնղոլների բնույթին ծանոթ պատմաբանը հարցնում է.

- Իսկ ի՞նչ կլիներ, **եթե** Կիրակոս Գանձակեցին մնար մոնղոլների ձեռքին կամ սպանվեր: Եթե Կ. Գանձակեցին հանկարծ անէնանար, ապա ո՞վ կգրեր այդ ժամանակվա պատմությունը, մեզ ո՞վ կհասցներ մոնղոլների բնավորության գծերի և նրանց կատարած ալան-թալանի մասին պատմությունները:

Կ. Գանձակեցին, որ մի քանի տարում սովորեց մոնղոլական լեզուն և 25 տարեկանում կատարեց թարգմանություններ: Նա գրել է. «Մոնղոլները տգեղ են, շատ են ուսում, բայց երբ չկա՝ ժուժկալ են ու դիմացկուն: Ուզեդեյ խանը ուսում էր շատ, ազաի էր ու ցաք ու ցրիվ տվող: Ոմանք ուղտերի նման կանգնած են ուսում, ոմանք՝ նստած: Ասում էին գողերին, բազմակնությունը էին գրադրում, բայց կանանց նկատմամբ սիրալի էին»:

Իսկ ի՞նչ կլիներ, **եթե** Կիրակոս Գանձակեցին մի քիչ էլ ապրեր, որ շարադրեր մոնղոլների արշավանքների հետևանքները: Գանձակեցին նկարագրում է մորեխների հարձակումները: Նա տալիս է, թե ինչպես այդ մորեխների դեմ թռչունների մի արշավանք սկսվեց, որոնք իսպառ ոչնչացրել էին մորեխներին:

Մոնղոլները Հայաստանը գրավել են խորամակնորեն, խաբելով, թե ոչինչ չեն անի: Նրանք հասկանում էին, որ հայերը մատյանները շատ են սիրում: Ուստի հաճախ ձեռք

չէին տալիս դրանց: Բայց ավա՜ղ, Գանձակեցու մահից հետո՝ «1271թ. մահացավ նաև Վարդան Արևելցին (50 օրվա տարբերությամբ, 1272թ.):

Այլընտրանքային պատմության մի դեպք է նաև այն, թե ինչպես երկու բանակներ պիտի ճակատամարտ տային, **եթե** մի ուժեղ քամի բարձրացավ և խանգարեց սպասվող ճակատամարտին: Շարունակեց ասել, թե ինչ կլիներ, եթե 1480թ. Ուզգա գետի մոտ տեղի ունենար (որ չկայացավ) ճակատամարտը մոնղոլների և ռուսների միջև: Իսկ **եթե** տեղի չի ունեցել, ի՞նչ օգուտ: Օգուտը մեծ է, գուցե թե շահեցին մոնղոլները, որ երկարատև կռիվներից դուրս գալով, թուլացած կարող էին պարտվել: Ուստի նրանք գերադասեցին լուռ հեռանալ: Ասենք, որ այդ ահագին եթե-ներն ու ինչու-ները պատմության մեջ շատ ու շատ են:

Ահա այդ եթե-ներից ու ինչու-ներից մի ավելի մեծ եթե, որ շոշափում է հայերի ճակատագրի առանձին դեպքեր:

Ասենք, ի՞նչ կլիներ, եթե բոլշևիկների գլխավորությամբ 1917թ. հեղափոխությունը Ռուսաստանում մի տարի ուշ լիներ կամ էլ չլիներ: Պատմությունը վկայում է, որ ռուսական ցար Նիկոլայ 2-րդ Ռոմանովը Առաջին աշխարհամարտի ժամանակ, որ կռվում էր Թուրքիայի դեմ, ուզում էր հասնել Կոստանդնուպոլիս և այն դարձնել իր մայրաքաղաքը: **Եթե** բոլշևիկյան հեղափոխությունը չլիներ Առաջին աշխարհամարտի ընթացքում, ապա հայերն այդ պատերազմի արդյունքների բերումով տեր կլինեին իրենց արևմտյան հողերին՝ նույնիսկ ամբողջական առումով և ոչ միայն 1878թ. Բեռլինյան վեհաժողովի սահմանագծով:

Գալով Մորազույն պատմությանը, նշենք, որ Երկրորդ աշխարհամարտի նախաշեմին խորհրդային երկրի ղեկավար Ստալինի վարքագիծը բացասական դեր խաղաց խաղաղ պատերազմին նրա պատրաստ լինելու հարցում:

Եթե Ստալինը չգերազանահատեր հնարավորությունները դիվանագիտական հարաբերությունների միջոցով պատերազմի վտանգը խՍՀՄ-ից հեռացնելու հարցում, և երբ նրան թվում էր, թե 1939թ. օգոստոսի 23-ի խորհրդագրերմանական պայմանագրի կետ առ կետ կատարումը խՍՀՄ-ի կողմից կվաներ պատերազմը, թեկուզ և 1941թ., կամ **եթե** չլիներ Ստալինի այն ենթադրությունը, թե Կարմիր բանակը կռվելու է «քիչ արյունով», «ուրիշի տերիտորիայում», պատերազմի առաջին մեկ ամսում հիտլերյան ֆաշիստների «Հյուսիսային խմբավորումը» չէր գավթի ամբողջ Մերձբալթիկյան ու չէր հասնի Լեհիզգրադին, գերմանական բանակի «Կենտրոն» խմբաբանակը չէր գրավի ամբողջ Բելոռուսիան և չէր հասնի Սմոլենսկին, իսկ «Հարավ» խմբավորումը չէր տիրանա Աջափնյա Ուկրաինայի մեծ մասին և չէր մոտենա Կիևին ու մարտեր չէր մղի նրա ծայրակետերում: Այդ

եթե-ների շարքին են պատկանում նաև այլ սուբյեկտիվ պատճառներ, որոնք նույնպես նպաստել են թշնամու ժամանակավոր հաջողություններին: Դրանք նույնպես կապ ունեն Ստալինի կամայականությունների հետ:

Նա չլսեց ու չընդունեց բոլոր այն տեղեկությունները, որ իրեն էին հասցնում խՍՀՄ-ի հավատարիմ հետախույզները և դիվանագետները (Ռ. Ջորգե, Շուլցե-Բայգե), դրանք վերագրում էր Անգլիայի և ԱՄՆ-ի քարոզչության դիտավորություններին:

Ի. Վ. Ստալինը 1941թ. կոնֆիդենցիալ (երաշխավորիչ) կարգով նամակ է ուղարկում Հիտլերին խՍՀՄ սահմանի մոտ անցկացվող գերմանական զորավարությունների առթիվ: Հիտլերն էլ, թափ առնելով այդ խրախուսիչ նամակից, կարողանում է Ստալինին համոզել, որ այդ 130 դիվիզիաների զորավարություններն իբր կատարվում են Անգլիայի վրա հարձակվելու դեպքում իր ավիացիայի անհասանելիության պատճառով:

Եթե Ստալինն իր զինվորական հրամանատարներից պահանջեր, որ զսպեն գերմանացիների զորավարությունները, արգելեն գերմանական ավիացիայի թռիչքները խՍՀՄ-ի տերիտորիայի վրա, թվում է, կզսպեր ֆաշիստների համարձակությունը, իսկ Կարմիր բանակն էլ զոհն կլիներ իր դիրքերում:

Կամ որ **եթե** չլիներ ստալինյան հետապնդումները խՍՀՄ-ի ռազմական գործիչների նկատմամբ, նրանց աքսորն ու սպանությունները, որ նրա հիվանդագին կասկածամտության արդյունք էր, խՍՀՄ բանակը կունենար իր լավ ու փորձված հրամանատարական կազմը և պատերազմի դաժան օրերին չէր երկնջի հիտլերականների առաջ:

Եթե 1937 թվականից մինչև 1938թ. սեպտեմբերը խՍՀՄ 733 բարձրակարգ հրամանատարներն ու քաղաշխատողները, գրեթե բոլոր դիվիզիաների, բրիգադների, կորպուսների, ռազմական օկրուգների հրամանատարները, կորպուսների, դիվիզիաների և բրիգադների քաղաշխատողները և գնդերի հրամանատարների մեկ երրորդը, որ հաշվվում էր 579 հոգի, շարքից չհանվեին և չզլխատվեին, անկասկած, Կարմիր բանակը թույլ չէր տա, որ գերմանական վերմախտն այդքան խորը մխրճվեր խՍՀՄ տերիտորիան:

Եթե տակտիկական տեսակետից Ստալինի ենթադրությունները ճիշտ լիներին, մեր ռազմական ուժն ի վիճակի կլիներ անմիջապես կանգնեցնել «Կենտրոն» խմբավորման հարձակումները և ոչ թե իր ուժերը կկաշկանդեր երկրի հարավում, ինչպես հրամայվել էր այդպես վարվել Ստալինի հրամանով:

Միջայել Բեգլարյան
Պարմության թռչակառու ուսուցիչ,
20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ

ՆԿԻՐՅԱԼՆԵՐ

ՄՏԻ ԶԱՆԱԿԻՐ



«Մայրենիի Գլխավորները» շարքից

Վերին Գոռաթաղի Ք. Կոքսի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն, մայրենիի Գլխավոր Նաիրա Առստամյանին՝ Մայրենիի տոնի առթիվ և մանկավարժական գործունեության 40 տարվա կապակցությամբ

Կան անհատներ, որոնց կյանքի բեղմնավոր ուղին բնութագրվում է ընտրած մասնագիտությանն ու վստահված գործին բոլորակալ ծառայելու ազնիվ ձգտումով: Դյուրին չէ նրանց ընտրած ճանապարհը, քանզի այն պահանջում է ուժերի գերլարում, հոգեկան մեծ ներուժ, գաղափարական համոզվածություն, մտավորականի անաղարտ մտածելակերպ, գիտելիքների մեծ պաշար, մարդկանց հետ աշխատելու ունակություն և կարողություն:

Այդ եզակի անհատներից է հանրապետությունում ճանաչված և հարգված, պատվարժան մտավորական, ժողկրթության երախտավոր, կրթության և դաստիարակության անգուցակական գիտակ և կազմակերպիչ, հայոց լեզվի բարձրակարգ մասնագետ, մայրենիի Գլխավոր, արցախյան համաձուլվածքով և բարձր բարոյականությանը օժտված հայրենասեր, հանրապետության վաստակավոր ուսուցիչ Նաիրա Առստամյանը, որի ծննդյան օրը, պաշտոնավարման 40 տարին հանդնկել են փետրվարի 21-ի՝ Մայրենիի օրվա հետ:

Նաիրա Առստամյանը ծնունդով Արցախ աշխարհի Առաջաձոր գյուղից է, սերված շրջանում ճանաչված, ժամանակին մեծ հեղինակություն վայելած, բարձրակարգ անասնաբույժ Արշավիր Առստամյանի օջախից: Մայրը Առաջաձորի Դուլյանների օջախից սերված, հայոց լեզվի և գրականության բարձրակարգ մասնագետ Լուսին Դուլյանն է: Ի դեպ, գյուղի ամենամեծ ազգը Դուլյաններն են, որոնցից տասնյակները եղել են մայրենիի ճանաչված մասնագետներ: Առստամյանների օջախում իրենց համեստ կենցաղով, ազնիվ վաստակով ծնվել և դաստիարակվել են հինգ երեխաներ, որոնք կազմել են օրինապաշտ ընտանիքներ և մեծ հեղինակություն են վայելում շրջանում:

Նաիրան 1970թ. ոսկե մեդալով ավարտել է Առաջաձորի միջնակարգ դպրոցը, նույն թվականին ընդունվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը, 1974թ. գերազանցակությամբ ավարտել և գործուղվել է մեր շրջանում աշխատելու, նույն թվի սեպտեմբերին նշանակվել Վերին Գոռաթաղի ութամյա դպրոցի

հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի և փոխտնօրեն:

Կարճ ժամանակում նա աչքի ընկավ մայրենիի գերազանց իմացությամբ, կազմակերպական ծիրքով, հասարակական ակտիվ աշխատանքով, պարտաճանաչությամբ և նշանակվեց տնօրեն ու առաջօր անփոփոխ աշխատում է այդ պաշտոնում: 1988թ. նրա ջանքերով դպրոցը վերակազմվեց միջնակարգի՝ շուրջ 150 աշակերտի ընդգրկմամբ:

Հաճախ են հանդիպում շրջկենտրոնում, սիրով զրուցում հետը ու ամեն անգամ բաժանվելուց վերհիշում նրա անցած ուղին, գործունեությունը: Այս անգամ մեջս ցանկություն առաջացավ թերթին հանձնել մտորումներս:

Շուրջ չորս տասնյակ տարիներ նա մանկավարժական կոլեկտիվ է ղեկավարել, բազմաթիվ ուսուցիչներ և աշակերտներ կրթել ու դաստիարակել, մայրենի լեզվի գաղտնարանները բացել նրանց առաջ, սիրել տվել նրանց մայրենին և հայրենիքը: Բոլորովին էլ պատահական չէ, որ մի քանի տասնյակ աշակերտներ ընտրել են սիրած ուսուցչուհու մասնագիտությունը և հայոց լեզու են դասավանդում մի շարք դպրոցներում:

Նաիրային ճանաչում են դպրոցական տարիներից (1964-1996թթ. աշխատել են շրջողկրթբաժնում, որից 7 տարի՝ որպես վարիչ), երբ հաղթում էր առարկայական օլիմպիադաներում, --շարադրությունները տպում էին շրջանային թերթում: Հիշում են, երբ 35 տարի առաջ Նաիրային տնօրեն նշանակեցին, և այսօրվա նրա դպրոցը: Հպարտությամբ են տեսնում նրան այդ պաշտոնում, համոզվում, որ իրոք, բաժինը ճիշտ ընտրություն է կատարել:

Մինչև Նաիրա Առստամյանին տնօրեն նշանակելը շրջանում կին տնօրեններ քիչ կային: Դպրոցներ կային, որտեղ տարին մեկ տնօրեն էին փոխում, եթե մի սխալ էր թույլ տրվում կամ թերացում: Այն ժամանակվա կոմունիստական խստությանը կուսակցական տույժ էին տալիս և ազատում աշխատանքից: Բայց ահա Նաիրան մնաց: Շատ խարդավանքների ենթարկվեց, բայց շնորհիվ իր բանիմացության, ազնվության ու անաչառության՝ մնաց: Նաիրայի գործունեությունը մեզ հուշեց, որ կամանց ավելի շատ կարելի է վստահել, և իրար հետևից սկսեցինք դպրոցների տնօրեններ կանանց նշանակել, որոնք հիմնականում արդարացում էին իրենց: Շնորհիվ Նաիրայի, Վ. Գոռաթաղի դպրոցը շրջանում դարձավ առաջավորներից: Աշակերտներն սկսեցին հաղթել տարբեր մրցություններում, մասնակցել օլիմպիադաներին, բուհեր ընդունվել:

Անցած դարի 80-ական թվականներին նա արդեն ճանաչված մտավորական էր շրջանում, ելույթներ էր ունենում կոնֆերանսներում, կուսակցական, կոմերիտական պրոպագանդիստների հավաքներում: Սիրով էին լսում նրա խոսքը. այն պարզ էր, անկեղծ, հաճելի, առանց անհարկի գովասանքների: Նա ակտիվորեն թղթակցում էր շրջանային և հանրապետական թերթերին, առաջարկություններ անում, որոնք արժանանում էին ուշադրության:

Նաիրան ամենակատիվ մասնակցությունն է ունեցել Արցախյան շարժմանը: Հիշում են, 1988թ. փետրվարի 12-ին Մարտակերտում կայացած առաջին բազմաձայնարանոց հանրահավաքում նրա կրակոտ ելույթը. միակն էր մտավորականներից, որ համարձակություն ունեցավ նման ելույթ ունենալ: Ես չեմ թաքցնում իմ տազանալը. երբ օսոնը վխտում էր: Նաիրային խորհուրդ տվեցի գոյշ լինել: Հիշեցի՝ 1948թ. Ստեփանակերտում ուսուցչական ինստիտուտի մի միջոցառման ժամանակ նման բովանդակությամբ ելույթ ունեցավ մեր կուրսից մի աղջիկ՝ Ռոզա Բալայանը: Առավոտյան դասի եկան հատուկ ծառայության երկու սպաներ, լսարանից քաշքշելով տարան. մինչև հիմա իմ ականջում են նրա լացը, ճիչերը: Բայց Նաիրան մնաց անասան: Նա դասարանով կազմակերպեց, և կոլեկտիվով գնացին Ստեփանակերտում կազմակերպված շուրջօրյա ցույցերին:

Բռնագաղթի ժամանակ Արցախից ոչ մի ժամ չի բացակայել: Ամուսինը՝ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Օլեգ Գարությունյանը, տղայի հետ ռազմաճակատում էր, իսկ ինքն անչափահասների հետ սովորել էր Ստեփանակերտի մի նկուղում: Չի ընդունել ոչ մի առաջարկ՝ համալսարանում, քոլեջում դասավանդելու: Միակ բաղձանքը գյուղի ազատագրումն էր և հայրենի օջախ վերադառնալը:

1993թ. ապրիլից սկսվեցին Գեոտակնի ենթաշրջանի գյուղերի ազատագրման գործողությունները: Նաիրան առաջինը վերադարձավ հայրենի գյուղ՝ Վերին Գոռաթաղ, որտեղ ամեն ինչ ավերված էր, քաղաքում, հրդեհված: Նա դպրոցի մի քանի ուսուցչուհիների հետ կազմակերպեց գյուղերից ներկրեց դպրոցական գույք, շինանյութեր, դուռ, պատուհան, մի կերպ մկազագույն պայմաններ ստեղծեց: Եվ սկսվեցին ուսումնական պարասյունները մարտից՝ 12 աշակերտներով (այժմ սովորում է 112 աշակերտ): Մեծ դժվարությամբ լուծեց կադրերի հարցը: Ինչպիսի՞ ծանր օրեր էին, ինչպիսի՞ դժվարություններ: Սակայն դրանք Նաիրայի համար չէին:

Այժմ ունեն նորակառույց դպրոցական շենք՝ նոր կահավորանքով, ուսումնական կաբինետներով, միաձույլ մանկավարժական կոլեկտիվով: Դպրոցը շրջանում և հանրապետությունում առաջավոր կրթությամբներից է: Իսկ դա ի վերուստ աստված չի ընծայել, այդտեղ տիկին Նաիրայի ձեռագիրն է: Շնորհաշատ մանկավարժը, մայրենիի Գլխավորն ու հմուտ ղեկավարն իր հարուստ գիտելիքները, փորձը սիրով հաղորդում է կոլեկտիվին, հարևան դպրոցների գործընկերներին: Նաիրան ակտիվ կենսագիր է մտավորական է, ակտիվորեն մասնակցում է համայնքի և շրջանի հասարակական-քաղաքական կյանքին: Նա կյանքի, աշխատասիրության շքեղ մարմնացում է, իր ժողովրդին ազնվորեն և նվիրված ծառայելու կերպար: Դպրոցը Նաիրայի հարազատ տունն է: Մանկավարժությունը՝ նրա տարերքը, միտքը: Նա անընդհատ պրպտումների ու որոնումների մեջ է, ձգտում է ստեղծել, վերափոխել,

արարել, նորություն մտցնել, նորի, առաջավորի, արժեքավորի ջատագովն է նա ուսուցչությունից գատ՝ այլ աշխատանք չի պատկերացնում: Բազմիցս են առաջարկել պատասխանատու աշխատանք շրջողկրթբաժնում: Միշտ էլ շնորհակալություն հայտնելով՝ մերժել է, քանզի իր կյանքի էությունը գտնում է դպրոցում, երեխաների հետ, հաճելի ժպիտով ավելացնում. «Ամենավաղ երաժշտությունն ինձ համար դպրոցական աղմուկն է»:

Նա իրոք, շրջանի պատվարժան և հեղինակավոր տնօրեն է, հայոց լեզվի և գրականության ամենաբարձրորակ մասնագետներից մեկը, դպրոցական գործի կազմակերպման լավագույն գիտակ, կոլեկտիվի, մարդկանց հետ աշխատելու բնատուր շնորհքով, տարիների ընթացքում ծավալող է աշխատախումբ, ուր թևածում են փոխադարձ հարգանքը, նվիրվածությունը, ազատ, առողջ աշխատանքային մթնոլորտը, ուր հարգի է անհատը: Նաիրա տնօրենը կամեցող է, մարդամոտ, ունի զգայուն սիրտ, մարդկանց նկատմամբ հոգատար է, նրբազգաց, վարչարարական խարդավանքների տեղիք չի տալիս, որով էլ բարի անուն, պատիվ ու հեղինակություն է վաստակել:

Շնորհաշատ տնօրենի և մայրենիի Գլխավորի դիմանկարը թերի կլիներ, եթե չամբողջացնեք նրա կերպարը՝ որպես կնոջ, տատիկի, գերդաստանի մեծ մոր, այդ աստվածընծա հայուհու անզուգական հատկանիշները: Ամուսինը՝ մաթեմատիկայի բարձրակարգ մասնագետ Օլեգ Գարությունյանը, սերված գյուղի պատվարժան օջախից, գյուղի նախապետ Արշակ Թեռու տոհմածառից: Գեղեցիկ ու օրինապաշտ այդ ընտանիքում թևածում է բարոյական ոգին:

Նաիրան Գարությունյանների գերդաստանին պարզել է չորս տղա, վերջինը՝ Արցախը, որն իրոք Արցախն է: Օլեգը և Նաիրան իրոք, օրինակելի ծնողներ են, որոնք իրենց մեջ եղած լավագույն հատկանիշները փոխանցել են իրենց երեխաներին:

Մեծը՝ Լեռնիկը, 15 տարեկանից մասնակցել է Արցախյան գոյամարտին, ծառայել մեր նորաստեղծ բանակում, ստացել բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ընկույվել համայնքի ղեկավար: Այժմ Դրսբնի ոսկու հանքում ամենահարգված պատասխանատու աշխատողներից է: Մյուս տղան՝ Նարեկը, իրավաբան է, աշխատում է շրջանի դատախազի պաշտոնում՝ վայելելով աշխատավորների վստահությունն ու հարգանքը: Մյուս տղան՝ Նելսոնը, աշխատում է դպրոցում՝ որպես գիտնիկ: Արցախը՝ ամենակրտսերը, ավարտել է իրավաբանական ֆակուլտետը և սովորում է մագիստրատուրայում:

Իրոք, գեղեցիկ, արժանապատիվ կյանքով է ապրում Գարությունյանների գերդաստանը՝ տղաներ, հարսներ, թոռներ, իսկ դրանք շատ են ու դալար են պահում Գարությունյանների տոհմածառը:

Նաիրան, իրոք, արժանի է հարգանքի և մեծարման: Նա աստօն կերտած մարդ է: Նրա հարստությունը հավատամքը և Քրիստոս ունենալն է:

Ռաֆիկ ԲԱՐՈՍՍՅԱՆ
20-րդ դարի Արցախի

ԶԻՆԿՈՐՆ ԵՄ ԵՍ
ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Մանկությունն աննկատ անցել Ու կարծես վաղուց այն հուշ է դարձել, Մորս սիրասուն գավակը արդեն Մեծացել է ու զինվոր է դարձել:

Տասնութ տարին այդ ինչպե՞ս անցավ, Ո՞նց միանգամից տղամարդ դարձա՝ Մորս ջերմ գրկից բաժանվել ահա՛ Սահմանն են հսկում ես հպարտությամբ:

Սահմանն են հսկում իմ հայրենիքի, Որի համար շատ արյուն է թափվել, Պատիվն են պահում իմ ընտանիքի, Որ մայրս ինձնով միշտ հպարտ լինի:

Կարոտն է տանջում հարազատներիս, Սակայն զսպում եմ կարոտը սրտիս, Զէ՛ որ զինվորն եմ ես հայրենիքիս՝ Ականջս նրա հրաման-կանչին:

Հանգիստ է խիղճս ու հոգիս խաղաղ, Ինչպես երկիրն իմ՝ անունը Արցախ, Շառայում եմ ես մեծ նվիրումով՝ Քանի որ դա է պատգամը իմ հոր:

Շառայեք դուք էլ այդ պատգամներով, Զեր ընտանիքի հանդեպ խոր սիրով, Իսկ եթե Արցախը կրկին վտանգվի՝ Զինվոր եղբայրներ, խորխտ ելեք ուղի:

Զորայր ԱՐՈՒՅԱՆՍԱՆ
N գորամասի շաքային

ԶԻՆԿՈՐ, ԶՈ ՄԻՐԱՆՔ
ԱՆՄԱՎ Է, ԶՈ ԱՆՈՒՆ
ՄԵՐ ՄՐՏԵՐՈՒՄ

Հետպատերազմյան Արցախում վաղուց արդեն ավանդույթ է դարձել զոհված ազատամարտիկի հիշատակին նվիրված հուշ-ցերեկույթ կազմակերպելը:

Օրենս Մարտունու շրջանի Թաղավար գյուղի մշակույթի տանը տեղի ունեցած հուշ-ցերեկույթը, որին մասնակցում էին նաև հարևան Կարմիր Շուկա, Հերիեր, Շովատեղ, Խերխան և Սարգսաշեն գյուղերի հասարակությունը, նվիրված էր այն զոհված ազատամարտիկների հիշատակին, որոնց ծննդյան տարեկից հունվար և փետրվար ամիսներին է: Այդ անմահ իերուններն են՝ Բորիկ Ավագյան, Գարիկ Գասպարյան, Մելսիկ Դանիելյան, Նաիրի Աղաբեկյան, Մերգել Մնացականյան, Սամվել Գասպարյան, Սերժիկ Շահրամանյան, Ռադեմիկ Հակոբջանյան, Աշոտ Բաղդասարյան, Արամ Գարությունյան, Վիլեն Մնացականյան, Լևոն Համբարձումյան, Համլետ Ասրյան, Արմինե Համբարձումյան, Գավրուշա Ավագյան:

Մինչ միջոցառումն սկսելը մասնակիցները այցելեցին Թաղավարի եղբայրական գերեզմանոց, թարմ ծաղիկներ դրեցին զոհված ազատամարտիկների շիրիմներին:

Հուշ-ցերեկույթին ներկա էին Մարտունու մշակույթի տան (որը նախաձեռնողն էր) անդամները (վարիչ՝ Անի Խաչատրյան), նախկին ազատամարտիկներ, զոհված ազատամարտիկների հարազատներ, ուսուցիչներ և աշակերտներ:

Թաղավարի մշակույթի տան ղեկավար Մարիետա Հովսեփյանը իր ելույթում ներկայացրեց հայրենի գյուղի հերոսների անցած պայքարի ուղին: Իրենց անզուգական կատարմամբ հանդես եկան Մարտունու մշակույթի տան անդամները, իսկ Թաղավարի 9-ամյա դպրոցի սաներն իրենց արտասանությամբ, երգ ու պարով ևս մեկ անգամ ապացուցեցին նախնիների հանդեպ ունեցած հարգանքը և հայրենիքի հանդեպ անմնացող սերը: Միջոցառման ավարտին շրջվարչակազմի կողմից ծաղիկներ հանձնվեցին անմահների հարազատներին:

Անուշ ՀԱՔԱՐՅԱՆ
ԱրՊՅ Լր.4-րդ կուրս

ՀԱՅ ԿԻՆԸ ՄԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՏԱՌԱԳՈՒՄԸ ՏԵՍԱԿՆ Ե ԵՎ ԱՆՊԱՐՏԵԼԻ ԿՆՈՋ ՏԵՍԱԿՆ Ե

Գրականագետ, քանակական գիտությունների թեկնածու, Երևանի պետական համալսարանի հայ գրականության ամբիոնի դոցենտ Սերժ ՍՐՎՊԻՆՅԱՆԻ հետ մեր զրույցի թեման հայտնի է, հայ կնոջ կերպարի առանձնահատկությունները կյանքում և գրականության մեջ, կին-տղամարդ հավերժական դիլեմայի մեկնաբանություններն ու ժամանակակից հայտնուն ներկայացվող պահանջները:

- Պարոն Սրավինյան, հայ գրականության մեջ հայտնու էության, դերի բացահայտումը և բարոյական-հոգեկան նկարագիրն ինչպե՞ս կրնա թափարկել:

Աշակերտի նկատմամբ անմարդկային վերաբերմունքի դրսևորումներից մեկը նրա ֆիզիկական պակասությունը երեսուր տարի է: Դա բարոյապես սպանում է երեխային: Սակայն, չթաքցնենք, լինում են նման դեպքեր, լինում են ուսուցիչներ, որոնք օգտվելով սեղանի առաջ կանգնած լինելու իրենց դիրքից, խոցում են երեխային և մույնիսկ դրանից հաճույք ստանում: ...Դասի ժամանակ ուսուցչուհին նկատում է, որ 7-րդ դասարանցի Սուրենը, որի աչքերը չիլ են, անընդհատ ժպտում ու խորամանկորեն աչքով է անում մյուս շարքում, իր ուղղությամբ նստած ընկերոջը՝ Համլետին: Խիստ հռչակվելու մարմնաջով տարված ուսուցչուհին մոտենում, կանգնում է տղայի նստարանի կողքին ու մի տեսակ դաժան հանգստությամբ նետում. «Իմացիր, որ այնքան էլ ուղիղ չես...»:

Ասում ու նորից ետ-ետ է գնում, հայտնվում ուսուցչի սեղանի մոտ: Լավ է, որ աշակերտներից միայն մի քանիսն են հասկանում ուսուցչուհու թունոտ բառերի իմաստը: Հոգու խորքում զսպելով վիրավորանքը, շիկնած, շառագունած Սուրենը դա-

սի ավարտից հետո աննկատելիորեն թողնում է դասարանը ու այլևս դպրոց չի գալիս: Տարվա վերջում ուսուցչուհին տեղափոխվում է մի այլ դպրոց, ու տղան շարունակում է ուսումը մեկ տարի ուշացումով: Անցնում է ավելի քան երկու տասնամյակ, ու երբ ուսուցչուհին հանգամանքների բերումով երևանում հանդիպում է նախկին սանին, զգում է, որ վերջինս դեռ հիշում է ստացած վիրավորանքը:

Զգում ու շատ է զղջում իր անմարդկային արարքի համար:

Սենք չենք ասում, թե աշակերտին, մանավանդ, երբ են թերանում է տրված հանձնարարությունների մեջ, չի կարելի կշտամբել, նկատողություն անել: Խոսքը չափավորության, մանկավարժական տակտի, հոգատարության մասին է: Պետք է միշտ հիշել, որ աշակերտը ևս շատ լավ տեսնում, տարբերում է բարեկամաբար արված հանդիմանանքը թշնամական խոցումից, սպանիչ խոսքից: Երեխայի վրա շատ վատ է ազդում նաև իր ծնողների հասցեին ասվող վիրավորական խոսքը: Պատահում են ուսուցիչներ, որոնք այնքան են առաջ գնում, որ հասնում են աշակերտի «յոթը պորտին»:

13-ամյա Ամայան դպրոց էր եկել առանց տետրի: Հունեք: Հոր մահից հետո մայրը հազիվ էր հոգում երեք երեխաների առաջին անհրաժեշտության նյութական կարիքները: Ուսուցչուհին, փոխանակ հուսադրելու, գոնե սիրալիկ բառերով թեթևացնելու աղջկա վիճակը, դասարանի առաջ հայտարարում է. «Լենց աղջիկները միայն սիրահարական երգերի տետր են պահում»: Մինչև հոգու խորքը վիրավորված

աշակերտուհին լացի միջից ուսուցչուհու երեսին է շարժվում «դու նրանից լավը չես եղել» բառերը ու թողնում դասարանը: Հաջորդ օրը ուսուցչուհին ստիպված է լինում աշակերտուհու մորը «հաշիվ տալ» իր արտահայտության համար, քանզի ստացվել էր չափազանց անախորժ մի պատմություն, որը պատիվ չէր բերում ո՛չ իրեն, ո՛չ դպրոցին:

Մանկավարժն իրավունք չունի հարցին մոտենալ չինովնիկի պես: Սա երբեք չի կարելի մոռանալ:

Դաստիարակության գործում անձնական օրինակի դերը մեծ է, անգնահատելի: Սա բոլորը գիտեն: Եվ ամենից շատ՝ կրթական ոլորտում աշխատողները, ուսուցիչները: Ցավոք, շեղումներ, երեխայի նկատմամբ կոպիտ, անհոգի վերաբերմունքի դեպքեր մեկ-մեկ լինում են, պատահում են: Անցնելի մի երևույթ, որ պետք է խստորեն դաստիարակող, տեղ չգտնի ոչ մի դպրոցում, մեծ ու փոքր ոչ մի ուսումնական հիմնարկում:

Ամփոփենք: Ուսուցիչը երեխայի մեջ միշտ պիտի տեսնի լավը, ուսանելի: Նա համոզված պիտի լինի, որ չափից ավելի խստությամբ ցանկալի արդյունքի հասնել չի կարող: Ռուս մեծ գրողի՝ Զեխովի խոսքը հիշեցնենք. «Ով չի կարող ձեռք բերել փաղաքշանքով, նա չի կարող ձեռք բերել նաև խստությամբ»: Խոսքն, իհարկե, անհարկի, ավելորդ խստության, կույր կարգապահության մասին է: Հիշեցրեք նաև, որ անչափ բարի լինելը նույնպիսի հիմարություն է, ինչպես անչափ խիստ լինելը:

Միքայել ԲԱԼՅԱՆ
Թշնամաբու ռաուցիչ

ՄՈՒԼՏՖԻԼՄԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀՈԳԵԿԱՆԻ ՎՐԱ

Մուլտիպլիկացիոն ֆիլմը՝ որպես ամենազանգվածային արվեստի տեսակ, հատուկ տեղ է գրավում երեխաների հոգեկանի ձևավորման և զեղարվեստական դաստիարակության գործում: Նրանց ձգտումը դեպի ֆիլմարվեստը չափազանց անմիջական է: Երեխաներն ազնիվ հավատով են հետևում երկնագույն էկրանից այն կողմ ապրող հերոսների հրաշքներով լի կյանքին. չէ՞ որ այդ կյանքի հիմքում իրական մարդկային հույզեր են, իրական ապրումներ, պայքար իրական արժեքների, երջանիկ ու խաղաղ կեցության համար: Դժվար գտնվի մի երեխա, որ առանց մեծ հափշտակության ժամերով մուլտֆիլմ չչիտի: Ընդ որում, նրանք հիմնականում նախընտրում են ակտիվ գործողություններով հագեցած մուլտֆիլմ:

Միևնույն մուլտֆիլմը մի երեխայի վրա կարող է լավ անդրադառնալ, մյուսի վրա՝ վատ: Դա կախված է երեխայի բնավորությունից, ընտանիքից, երեխայի նկատմամբ վերաբերմունքից: Շատ կարևոր է նաև մուլտֆիլմի ազգային բնութագիրը հաշվի առնելը:

Գաղտնիք չէ, որ այսօր շատ ծնողներ մուլտֆիլմերով են փոխարինում երեխայի հետ ժամանակ անցկացնելը: Իհարկե, ծնողները միշտ չէ, որ կարող են այնքան ժամանակ ունենալ, որ կարողանան անընդհատ երեխայի հետ լինել: Բացի այդ, ավելի ապահով է, երբ երեխան տանն է, ոչ թե բակում: Ուստի շատ ծնողներ պարզապես գերադասում են, որ իրենց երեխան տանը մնա և մուլտֆիլմ դիտի:


Սակայն ինչ մուլտֆիլմ է դիտում երեխան, և ինչ է այն սովորեցնում:

Ամենից շատ մուլտֆիլմեր դիտում են վաղ մախարայորոցական, մախարայորոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաները: Հայտնի է, որ մուլտֆիլմերը երեխայի մոտ առաջացնում են դրական և բացասական հույզեր: Երեխաները մուլտֆիլմի միջոցով տարբերում են լավն ու վատը, բարին ու չարը:

Տարիներ շարունակ մեկը մյուսին լրացնում է անմարդկային մուլտֆիլմերի շարքը:

Տրանսֆորմեր, Վինքս, Նաբուտո և մի շարք այնպիսի տարօրինակ կերպարներով մուլտֆիլմեր, որոնք ամեն օր 40 րոպե էկրանի առաջ են պահում երեխային: Այսօր արտադրվող այդ կինոնկարների մեծ մասն ագրեսիվ է, երբեմն բովանդակում է սեռական տեսարաններ, հաճախ նախատեսված չէ երեխաների համար: Նմանատիպ բովանդակությամբ մուլտֆիլմերը շատ հաճախ երեխաների համար դառնում են ագրեսիվ վարքի ընդօրինակման մղող և վնասող գործոններ: Երեխաները տեսնում են 2 ա տ շուտ ընկալում է վ ա տ ը: Մ ու լ տ - ֆիլմի հերոսը, որը վատն է, չար է, հաճախ է դուր գալիս: Երեխաներն անհամարժեք են դառնում և իր համար իրենց և վնասող գործոնները հակադրեցնում են: Մեծահասակներից շատերը հակադրեցնում ունեն ցուցադրվող ամեն ինչի նկատմամբ, ինչը բացակայում է երեխաների մոտ: Ագրեսիայի կրկնօրինակման արդյունավետությունը բարձրանում է, եթե.

- ազդեցության օբյեկտն իրեն նույնացնում է ագրեսիվ հերոսի հետ,
- առկա է բռնակալի անպատժելիության և նույնիսկ խրախուսման ցուցադրություն,
- դիտողի նախնական ագրեսիվության



մակարդակը բարձր է:

- հեռուստահերոսի մեջ առկա են ագատարարի կամ փրկարարի որոշ դրսևորումներ,
- ագրեսիվ ֆիլմում առկա են այնպիսի պայմաններ, որոնք համընկնում են հեռուստադիտողի իրական կյանքի փորձին,
- հեռուստադիտողը կարծում է, թե ցուցադրվող ագրեսիան հիմնված է իրական փաստերի վրա:

Երեխաները սիրած հերոսից օրինակ վերցնելով ու դեռևս չգիտակցելով հնարավոր վտանգը, հաճախ են ցուցաբերում ագրեսիվություն շրջապատի նկատմամբ: Հատկապես, երբ մուլտֆիլմի հերոսները հաճախ են վնասում ինչ-որ մեկին կամ հենց իրենց, ընդ որում, մնում են անվնաս և առողջ: Պետք է նշել նաև, որ հեռուստատեսային ագրեսիան օգնական դիրքորոշում ձևավորող գործոն է: Ընդ որում, երեխաների կողմից հեռուստատեսությամբ ագրեսիա դիտելու հետևանքները կարող են արտահայտվել տարիներ անց, ասենք, երիտասարդ տարիքում: Ի դեպ, վերոհիշյալ միտումն ավելի հատուկ է տղամարդկանց, քան կանանց:

Այսօր հոգեբաններն ու գիտնականները միաձայն պնդում են, որ հեռուստացույցն առաջին հերթին ազդում է երեխայի զարգացող նյարդային համակարգի վրա:

Հեռուստացույցը ստեղծում է հիպնոսիկ մի դաշտ, դրա հետևանքով ուշադրությունը դառնում է ցրված, տեսողությունն ու լսողությունը բթմանում են, իջնում է ճանաչողական գործընթացների արագությունը:

Երկար հեռուստացույց դիտելուց սահմանափակվում է երեխայի երևակայությունը, այն ազդում է երեխայի ուսման գործընթացի վրա, քանի որ ծանրաբեռնվում են ուշադրությունը, լսողական և տեսողական համակարգը: Խանգարվում է նաև թունը: Իսկ ոչ բավարար թունը նպաստում է մարտողության ոչ լիարժեք իրականացմանը: Ելնելով վերը շարադրվածին, ծնողներին խորհուրդ է տրվում.

- պետք է ոչ թե երեխային արգելել մուլտֆիլմ դիտել, այլ նստել նրա կողքին և ուղղոր-

դել դեպի ճիշտ ընկալումը.

- աշխատեք մինչև 7 տարեկան երեխային մեծակ չթողնել հեռուստացույցի առաջ: Ուշադիր հետևեք նրա ռեակցիաներին, մեկնաբանեք նրան հասկանալի լեզվով, թե ինչ է կատարվում էկրանին: Ծնողին լսելով, երեխան սովորում է արտահայտել իր հույզերը: Դա օգնում է, որ վստահություն ձևավորվի երեխայի և ծնողի միջև.
- ցանկալի է, որ երեխան մուլտֆիլմեր դիտի 3-4տարեկանից ոչ շուտ, երբ արդեն ընդունակ է հասկանալ ոչ բարդ սյուժեները:
- 4. Ցանկալի է, որ երեխան 1 տարեկանից սկսած, օրական 30 րոպե կամ 1 ժամից ավելի հեռուստացույց չդիտի, որ երեխաների սեռյալկում հեռուստացույց չլինի.
- մի միացրեք հեռուստացույցը դպրոց գնալուց առաջ. դա կարող է շեղել երեխայի ուշադրությունը ուսումնական գործընթացից.
- խոսեք երեխայի հետ այն հույզերի մասին, որոնք նա ունենում է հեռուստացույց դիտելիս.
- երեխային հեռուստացույցից օգտվելու մշակույթը սովորեցրեք ձեր փորձով.
- հիշեք, որ դաժան և բռնության տեսարանները տրավմա են պատճառում երեխային, որոնք հետագայում կարող են լուրջ ազդեցություն թողնել նրա հոգեկան աշխարհի վրա.
- երեխային ժամերով հեռուստացույցի առաջ նստեցնելու փոխարեն տարեք զբոսանքի:
- Կարևոր է հիշել, որ մարդու բնավորությունը ձևավորվում է մինչև 7 տարեկան հասակը, և այս առումով էական դեր են խաղում այն մուլտֆիլմերը, որոնք դիտում են երեխաները: Ընդհանուր առմամբ, մուլտֆիլմը պետք է ուսուցանող և դաստիարակող տարբեր պարունակի, սովորեցնի հարգանք դեպի մեծերը, սեր՝ կենդանիների նկատմամբ և այլ կարևոր արժեքներ:

Դիանա ԱՐԱՆՅԱՆ
ԿԱԻ հոգեբանության
մասնագետ

ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆ - 500

ԻՐՈՔ, ՍԽՐԱՆՔ ԵՐ

Հայ գրատպությունն իր հինգհարյուրամյա ճանապարհին բազմաթիվ դժվարություններ ու արգելքներ է հաղթահարել: Նրա մի վառ էջն էլ Արցախյան տպագրությունն է, որն սկզբնավորվելով 19-րդ դարի սկզբներին Անդրկովկասի մշակութային օրրան Շուշիում, խորհրդային տարիներին տեղափոխվեց մայրաքաղաք Երևան և այժմ արդեն Երևանի տպագրության կենտրոնն է:



Ազատագրական պայքարին նրա ակտիվ մասնակցությունը:

Պատմում է Ստեփանակերտի «Պոլիգրաֆ» ձեռնարկության նախկին տնօրեն և երկարամյա աշխատող Հրաչյա ԱՎԱՆԵՍՅԱՆԸ:

- Բոլորին հայտնի է, թե ինչ արձագանք ունեցավ 88-ի փետրվարի 20-ի ԼՂ մարզային խորհրդի հանրահայտ նստաշրջանի ընդունած որոշումը, որով ԼՂԻՄ-ը անջատվում է Ադրբեջանի կազմից և վերանվանվում Հայաստանին ու դրան հաջորդող իրադարձությունները, մասնավորապես ԽՍՀՄ Կենտկոմի որոշումը:

Մեզ վրա զինվորական գրաքննիչ էր կարգվել զննապետ Կիսեյովը: Տպարանը գիշեր-ցերեկ շրջապատված էր ԽՍՀՄ ներքին գործերի զինվորներով, համարյա ամեն աշխատողի վրա մի ավտոմատով էր կարգված: Բոլորի գրախոսում գրքույկներ կային այն մասին, թե Ղարաբաղն ադրբեջանական տարածք է, և հայերն այնտեղ եկվորներ են: Ապաների ձեռքին ավելի մեծ գրքեր կային: Ահա այդպիսի հակահայկական քարոզչություն էր տարվում: Պետք է ասել, որ գրաքննիչ Կիսեյովը հակված էր դեպի հայերը: Ասում էր՝ ինքը համոզված է, որ մենք՝ հայերս ենք ճշմարիտը, բայց ինքը ոչ մի բան անել չի կարող, քանի որ իր վրա էլ են ճնշում գործադրում, և ինքը հրաման է կատարում: Մի օր Կիսեյովն ասաց, որ մեզ կանչելու են վերև՝ Կենտկոմի որոշումը, որով Ղարաբաղում կատարվող իրադարձությունները մի խումբ ծայրահեղական-

ների գործ էր համարվում, և ժողովուրդների բարեկամության կոչ էր արվում «խորհրդային Ղարաբաղ» թերթում տպագրելու համար: Իհարկե, նրանք սկզբում ճնշում էին գործադրել խմբագրության վրա, որը կտրականապես հրաժարվել էր տպագրելուց: Եվ մտածում էին, թե ավելի հեշտ է կոտրել տպարանի աշխատողների կամքը, քան՝ ձեռքադրել խմբագրության աշխատողներին: Երբ մեզ՝ թերթի վրա աշխատողներին, կանչեցին, նստած էին Ադրբեջանի Կենտկոմից ուղարկված ռուս և ադրբեջանցի ներկայացուցիչները: Մեզ կասկածելիորեն շատ ջերմ ընդունեցին: Մեր ձեռքը տվեցին կոչը, որ տպագրենք: Բնականաբար, հրաժարվեցինք՝ ասելով, որ տպագրում ենք այն, ինչ տալիս է խմբագրությունը, մենք ընդամենը կատարողներ ենք: Բայց նրանք ասացին, որ պատասխանատվությունն իրենց վրա են վերցնում: Բացի այդ, հրաժարվելու դեպքում իրենք մասնագետներ կբերեն և գործն անել կտան: Մեզ, իհարկե, ձեռնադրելու տպարանն ուրիշի ձեռքը հանձնելը: Պետք էր ճկուն քաղաքականություն վարել, որ այդ բանը տեղի չունենար: Եվ պլան կազմեցինք...

Կենտկոմի որոշման տեքստը շարվածքի տվեցինք լավագույն լինոտիպիստ Ռազմիկա Թորոսյանին (այժմ նա չկա): Նա տեքստը դիտարկողալ սխալներով էր հավաքում: Երբ հերթական անգամ տեքստը հետ տվեցին, Կիսեյովը ջղայնացավ, ասելով՝ սա՛ ինչ բան է, ամեն օր թերթի վրա նորմալ էք աշխատում, հիմա այսքան սխալներ էք անում: Ռազմիկան հայերեն ասաց, որ ինքն ավտոմատի տակ չի կարողանում աշխատել: Թող դուրս գան, որ հանգիստ աշխատի: Ասածը թարգմանեցինք: Գրաքննիչը կարգադրեց, որ զինվորները դուրս գան, աստիճանների առաջ կանգնեն: Եջկապ Շիրինը միացնում է բոլոր լինոտիպ մեքենաները, և որանց աղմուկի տակ ինքն ու Ռազմիկան 15 մետր բարձրությունից պարսպի օգնությամբ իջնում-հեռանում են շենքից: Չետո, երբ նրանք բերված ծնկները տեսանք, հասկացանք, թե ինչ դժվարությամբ էին դա արել. նրանց արածն իրոք սխալ էր:

Մի հինգ րոպե հետո, երբ զինվորները գնացին տեքստը Ռազմիկայից վերցնելու, տեսան՝ նա չկա, անհետացել է: Սկսեցին գոռոզալ պահակի վրա, թե ինչու է բաց թողել: Բայց վերջինս արդարացավ, որ չի տեսել: Դետո էլ մեզ վրա հոխորտացին: Ռազմիկայի հասցեն վերցրին ու զինվորներին կարգադրեցին, որ գնան տնից հանեն-բերեն: Բայց մենք Ռազմիկային զգուշացրել էինք տուն չգնա: Իհարկե, հաջորդ օրը մեզ տարան պարետատուն՝ հարցաքննության, բացատրություն պահանջելու: Բայց Կիսեյովը, որ համակրում

էր հայերիս, ասաց, թե մենք մեղք չունենք, կաքինետից դուրս չենք եկել: Եվ մեզ ազատ արձակեցին:

Տպարանի տնօրեն Յու. Ներսիսյանը բազմաթիվ զրկանքներ է կրել՝ ռազմական ռեժիմին հակառակվելու համար, մի քանի անգամ ձերբակալվել, պետական անվտանգության կոմիտեի մեկուսարանում ու բանտում կրել անասելի չարչարանքներ:

Մեկ այլ դրվագ: ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի պատմական որոշումը պետք է դուրս գար «խորհրդային Ղարաբաղ» թերթում: Ժողովուրդը, հավաքված տպարանի շուրջը, անհամբեր սպասում էր թերթի տպագրվելուն՝ հավատալով, որ որոշումը թերթում հրապարակվելուց հետո այլևս կասկած չի լինի, որ Ղարաբաղն անջատված կհամարվի Ադրբեջանից: Որպիսի՜ հավատ տպագիր խոսքի նկատմամբ... Ամբողջ գիշեր տպարանն աշխատում էր: Ջարմանալիորեն այդ օրը ոչ մի զինվորական չէր կարող այնտեղ: Հասկացանք, որ դա ծուղակ է: Մենք մեր գործն արեցինք: Տպագրության ընթացքում օրինակների մի մասը թաքցրինք: Երբ տպագրությունն ավարտեցինք, կարկուտի պես հանկարծ վրա թափվեցին զինվորականները և ամբողջ տպարանակն առգրավեցին: Նրանց գնալուց հետո թաքցրած տեղից հանեցինք թերթը և բաժանեցինք ժողովրդին, իսկ ակտիվիստներն անմիջապես տարան փոստ՝ Հայաստան և Ռուսաստան ուղարկելու համար: Ասենք, որ այդ ժամանակ թերթը տպագրվում էր ավելի քան 90 հազար տպաքանակով:

Երրորդ դրվագը: Մի օր «խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագիր ՄԱՍԻՍԻ Դով-հաննիսյանը զանգահարեց, թե մեզ մոտ է գալիս լեյնինգրադցի մի կին, բարի լինենք նրա հարցերին պատասխանել: Եկավ, ներկայացավ՝ Ինեսա Բուրկովա: Նա ասաց, որ ուզում է անմիջապես բանվորներից լսել Ղարաբաղյան շարժման մասին: Որպեսզի մեկ-մեկ չկանչեն, առաջարկեցի զեմլ արտադրամասը շրջել: Բանվորները մեկ մարդու պես ներկայացրին մեր արդար պահանջը:

«Խորհրդային Ղարաբաղի» հերթական համարում լույս տեսավ Ինեսա Բուրկովայի «Ամալը լեռներում» հոդվածը: Նա խնդրեց մի հազար հատ ավել տպեք, որ հետը տանք: Ասացի՝ տպելը կտպենք, բայց մտավախություն հայտնեցինք, թե ինչպես է իր հետ տանելու, օձմեն ամեն տեղ վխտում է: Ասաց՝ դա թողեք ինձ: Եվ այդպես էլ եղավ: Նրա հոդվածը մեծ արձագանք գտավ Ռուսաստանում: Դեռազայում իմացանք, որ նա մի հոդված էլ գրել է «Լիտերատուրնայա գազետա» թերթում՝ «Հարսանիք լեռներում»

ՆՐԱՆՔ ՍՊԱՆԵԼ ԷԻՆ ԻՄ ՀԱՎԱՏԸ

- Եկել են ազերիների դեմ կռվելու: Խնդրում են օգնեք ու՜մ դիմել:

Բարձրահասակ, շիկահեր ու կապուտաչյա երիտասարդ էր մեզ դիմողը: Մեր միջև տեղի ունեցած երկխոսությունն ուզում են ներկայացնել կարծ տղազրությամբ:

- Որտեղացի՞ եք:

- Ազգությամբ ռուս են: Ապրում էի Բաքվում: Ազերիներն անարգեցին իմ ընտանիքը, ուստի ուզում են վրեժխնդիր լինել:

- Պարզաբանեք, խնդրեմ, Ձեր միտքը:

- Ինձ ծանուցագիր էին ուղարկել շրջափն կոմիսարիատից: Ահա այդ ծանուցագիրը: Բայց քանի որ մեր թաղից գորակոչել էին միայն սլավոնական ազգության ներկայացուցիչներին, ես և իմ ընկերներից մի քանիսը հրաժարվեցինք ներկայանալ: Մորս խորհրդով ես մեկնեցի Կալինինի մարզ: Իբրև պատիժ՝ ազերիները ծեծեցին իմ ծնողներին և թալանեցին մեր տան ունեցվածքը: Ծնողներին մի կերպ հաջողվեց ապաստարան գտնել մոտակա գորամասում, որը պատկանում էր ԱՊՀ գործերին, որտեղից նրանց հետո ռազմական ինքնաթիռով փախցրին Ռուսաստան:


Ես խաղաղ աշխատանքի մարդ եմ: Ուզում էի այս ամառ ամուսնանալ, բայց նրանք սպանեցին իմ ապագայի հավատը: Հիմա ինձ ուրիշ բան չի մնում անել, քան վրեժ լուծել:

- Բայց չե՞ որ մարտում կարող են սպանել Ձեզ:

- Երբ ոտնահարվում է մարդկային և ազգային արժանապատվությունը, մահից էլ վատ է: Այդ առումով Ղարաբաղցիներն ավելի պատվախնդիր են: Այնպես որ, խոսք չի կարող լինել սպանվելու ահի մասին:

- Իսկ վրեժխնդիր լինելուց հետո ի՞նչ եք մտադիր անել:

- Կուզեցնայի քաղաքացին դառնալ ազատ և անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության:



Լուս.՝ Վալերի Անդրյանի

թյան: Նման արժանապատիվ ժողովրդի հետ ապրելը մեծ պատիվ է ինձ համար: Իսկ այստեղ ապրելու իրավունքը ես կնվաճեմ իմ արյամբ...

Այս կարճառոտ երկխոսությունը տեղի ունեցավ Ինեսայի սկզբներին, երբ դեռ չէր սկսվել Շահունյանի ողբերգությունը: Հիմա թերևս այդ ռուս երիտասարդը, որը խնդրել էր չիրապարակել իր անունը, մարտադաշտում իր կամքն է փորձարկում, և մենք ոչինչ չգիտենք նրա ճակատագրի մասին: Բայց որտեղ էլ նա լինի, մենք ուզում ենք ասել:

- Ուժ և գորություն քո բազուկներին: Եվ թող քեզ գորավիզ լինի արցախցու պատվախնդրությունը:

ԿԻՄ ՎԱԲԻՐԵՆՅԱՆ

ՎԵՐՋԻՆ ԺԱՄԻՆ

Հավելվածը պատրաստ էր տպագրության, երբ տեղի ունեցան Մարտակերտի ողբերգական իրադարձությունները: Այդ առթիվ մեր թղթակիցը դիմեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին: Ահա թե ինչ ասաց նա.

- Ես վերջին օրերի անհաջողությունները համարում եմ ժամանակավոր: Ոչ մի թիզ հորից չպետք է հրաժարվել: Անհաջողությունների հիմնական պատճառը խուճապն է, որը ճնազդի պես գլորվելով մեծանում է: Դրա առաջը անպայման պիտի առնել: Դրությունը ծանր է, բայց ոչ անհուսալի: Ես լավատես եմ և կարծում եմ, որ հնարավոր է համարել, համախմբել թե՛ ռազմական, թե՛ մարդկային ու-

վերնագրով: Ծնորհիվ այդ տիկնոջ՝ Մուսկվա-յուն ստեղծվեց «Կրիկ» միությունը, որում ընդգրկված էին նշանավոր շատ մտավորականներ՝ Բուրկովա, Անդրեյ Նույկին, Ելենա Բոնեյ, Անատոլի Սոբչակ և ուրիշներ:

Պատերազմի տարիներին պոլիգրաֆը միակ ձեռնարկությունն էր, որ աշխատում էր անխափան: Ոչ մի րոպե չենք դադարեցրել մեր աշխատանքը: Տպարանի տնօրեն Յուրի Ներսիսյանը հայթայթում էր տպագրության համար անհրաժեշտ նյութերն ու պարագաները, իսկ վարպետ Էռնեստ Գասպարյանն ապահովում էր արտադրամասի անխափան աշխատանքը:

Հարց կարող է առաջանալ՝ ինչո՞վ էինք զբաղված այդ ժամանակ: Տպագրում էինք արցախցի երիտասարդ գրողների գրքերը, «Արցախ» հանդեսը (խմբագիր՝ Կիմ Գաբրիելյան), թուրքերենից (Կարաբում էինք մեր բանակի պատվերները, գեներալ Իվանյանի խնդրանքով տպագրում էինք ռազմական գրքեր: Նա Լեռնից գաղթի ռազմական ակադեմիայից հատուկ բերել էր այդ գրքերը, որոնց շարքում քիչ չէին քարտեզները: Դրանցում նշված էին Ադրբեջանի բոլոր գյուղերն ու շրջանները: Քարտեզներն այդ ժամանակ տպագրվում էին Թբիլիսիում՝ միակ մասնագիտացված տպարանում: Հրավիրեցինք քարտեզների տպագրության մասնագետ Հրանտ Բեգլարյանին: Գործը կատարելու համար պահանջվում էր 5-6 ամիս: Բազմազան ու սարքի օգնությամբ, որը տպարանին էր նվիրել Արկադի Վոլսկին, մասնագետը երեք օրում տպեց այդ գրքերը: Գեներալ Իվանյանը շատ գոհ մնաց մեր աշխատանքից: Նա ամեն որ այցելում էր տպարան: Մի օր էլ տեսնելով, որ բանվորները ճաշում են առանց հացի, երեք պարկ ալյուր ուղարկեց: Բաժանեցինք բանվորներին: Իսկ ամենաթանկ հիշողությունն այն է, երբ գրքերի տպագրությունն ավարտելուց հետո Իվանյանը եկավ տանելու: Նա գոհ մնաց աշխատանքից, համբուրեց ճակատս, գրպանից հանեց մի ժամացույց ու ինձ նվիրեց, որը սրբությամբ պահում եմ:

Տպարանի աշխատողներն էլ իրենց արժանի ներդրումն ունեն Արցախյան գոյապայքարում նաև պատերազմին մասնակցեցին: Նրանցից տպագրիչ Վալերի Բալասանյանը, ով հետմտախոս արժանացել է «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի, բանվոր Արտաշես Շահնազարյանն իրենց կյանքը դրեցին հայրենիքի փրկության գոհասեղանին:

Ստեփանակերտի տպարանն իր հերոսական գործունեությամբ հիրավի, ինքն էլ մի մարտիկ էր:

Ժերը և դիմակայել թշնամուն: Մենք այն նույն ժողովուրդն ենք, որն ընդամենը երկու ամիս առաջ փայլուն հաղթանակ է տարել Շուշիում: Այդ ժամանակվանից ոչինչ չի փոխվել՝ բացառությամբ ժողովրդի մեջ բույն դրած խուճապը: Ադրբեջանցիների պարտությունը Շուշիում պայմանավորված էր այդ նույն խուճապով: Մի բան պիտի հաստատ իմանալ. կռվող ուժը եթե թիկունքում ժողովուրդ չի տեսնում, չի կարող ինչպես հարկն է՝ դիմակայել թշնամուն: Ժողովուրդը պիտի ամուր կանգնի իր պապենական հողի վրա: Իսկ մեր ազատամարտիկներն, անտարակույս, ամեն գնով կպաշտպանեն այս սրբազան հողը, մանավանդ որ, այս հողի վրա մենք չպիտանվեց շատ արյուն ենք թափել և այդ արյունը էժան չենք կարող ծախել:

Ոչ միայն Հայաստանում, այլև նախկին խորհրդային Միությունում շատերը գիտեն, որ Արցախի երիտասարդ բանակն ամենամարտունակ և կռվում թրծված բանակն է: Դրան ավելացրած նաև, որ այդ բանակի թիկունքում կանգնած են իրենց հայաստանցի եղբայրները, որոնց շունչը միշտ էլ զգացվել է այստեղ: Սա թշնամու հարվածի վերջին 9-րդ ալիքն է: Եթե դրան էլ դիմանանք, ապա հաղթանակը մերը կլինի: Իսկ չդիմանալու իրավունք չունենք:

«Քիրս» 1, 1992թ. ԼՂՀ գրողների միության «Արցախ» հանդեսի անվճար հավելված

ՉԱՐԵՆՑ-115

ՉԱՐԵՆՑԻ ՎԵՐՋԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ



ՊՍՏՊԱՍ

Նոր լույս ծագեց աշխարհին. Ո՞վ այդ արևը բերեց:--

Ահա ոսկյա մի արև՝ ճառագուճով իր հրե՛ Այգաբացի պուրպուրե

Նժույզների վրա հեզ՝ Նոր աշխարհին ու մարդուն Յողում է լույս զվարթուն, Նոր աշխարհին ու մարդուն Ո՛վ բերեց լույսն այս արթուն, Օ՛, ո՞ւմ ձեռքով վառվեց, ո՞ւմ, Յրակարմիր, հրավարս, Աղամանդյա լույսը այս:--

Կքած կյանքի բեռի տակ, Խոր գերության ընդերքում,

Իմաստության մի գետակ Յիմարության համերգում - Քանի՛ տարի, քանի՛ դար Վկայեցիր անհերքում...

Ափերին այն խավարտչին, --- Ուր հայրենիքն էր մեր հին,- Չկա՞ր արդյոք գետ մի հորդ, Որ գերության անհաղորդ՝ Լուրթ՝ հոսելով դարից-դար՝ Մթության մեջ այն համառ Այս այգաբացն էր կրում, Յո՛ւր այգաբացն այս հեռու՝ Յնուց պահած իր ջրում Օ՛, ըղձակա՛ն այս հեռուն...

Կքած կյանքի բեռի տակ՝ Ոգի՛, անկոր, հու՛ր գետակ...

Ահա վառվում է մեր նոր Յաղթանակի լույսը բորբ. Լվանում է նա հիմա Վառվող ոգին մեր անմահ, Չքնաղ արևն այդ արի, Վառված հրով աշխարհի... Չկա՛ ուրիշ արև էլ. Նա՛ է միայն, որ դարեր Անմար՝ պիտի արևէ՛...

Լույսով վառված սակայն այդ՝ Նժարներից հիմա մենք Յիմարությանը չթափենք

Իմաստությունն այն արար.- Մեր անցյալի խորամիտ էջն այն արդար ու ռամիկ՝

Մեծահանճար ու վարար...

1933.V. 9

Այն նվիրված է Ավետիք Իսահակյանին: Չարենցը գրում է. «Սիրելի Ավետիք, ներքևում երգում էին քո երգը, սիրտս լցվեց, և ես գրեցի հետևյալ ստիխը. ընդունիր իբրև ձոն և ողջույն».

Որքան գնում - այնքան խոնարհ, Այնքան անհուն և այնքան ջերմ ես խոնարհում եմ քո առջև Ե՛վ սեր, և՛ սիրտ, և՛ քնար:

Արդեն ցնորք է անհնար՝ Ունենալ երգ այնքան նայիվ, Որ հմայե երեխային Ե՛վ ծերունու սրտում մնա:

Սիրտդ կարող է վեհանալ, Որ անսալով նրա սրտին՝ Երգ ես տվել ժողովրդին, Որ իր երգով անմահանա:

Ա՛խ, կուզեի ես ունենալ Գոնե մի երգ այնքան ջերմին, Որ գրեի խուղիս որմին - Ե՛վ նա հավետ այնտեղ մնար:

Ե՛վ սերունդներ այսպես գային, Ե՛վ կարդային խուղիս որմին Սրտիս միակ երգը ջերմին,- Ե՛վ երգս այդ ես քեզ տայի:

1937.27.IX. բանտ, գիշեր

Եղիշե Չարենցին

...Քնքնչությունը Տերյան, Թունանյանի սիրտը մեծ, Վեհ քնարը Պուշկինի, Մայակովսկու խոսքը,- Դու ձուլեցիր քո սրտի քուրայի մեջ, հրի մեջ, Կռելով մեր դպրության ազնիվ մետաղը մաքուր: Վ. ԱՆԱՉԱՆ

...Չարենցը մեռած - ո՛չ, բարեկա՛մ - Չարենցը լույս է, ոգի ու սեր, Չարենցը ծայն է Ու խոսքի հորդող գետ է անեզր, Չարենցը սիրտ է հրակարմիր, Սրտի տրոփ է մրրկահարվող, Չմարող բոց է արարչագործ:

Գ. ԱՐԴԱՐՅԱՆ

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ ԵՎ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

1934թ. Յան Բեկնագարյանի նախածեռնությամբ նկարահանվեց առաջին հնչուն ֆիլմը՝ «Պեպոն»: Այդ առիթով կրկին հանդիպեցին պոեզիայի եւ երաժշտության երկու նշանավոր դեմքերը՝ Ե. Չարենցն ու Ա. Խաչատրյանը: Կոմպոզիտորը, մեծ ուշադրություն դարձնելով ֆիլմի երաժշտությանը եւ օգտագործելով Սայաթ Նովայի սքանչելի երգերի մոտիվները, հասել է հաջողությունների: Իսկ Պեպոյի երգի համար նա ցանկացել է ընտրել Չարենցի խոսքերով գրված երգի տարբերակը:

Էկրան բարձրանալուց հետո «Պեպոյի երգն» այնքան մեծ ընդունելություն է գտնում, որ ժողովրդի երկու տաղանդավոր զավակների համատեղ ստեղծագործությունը վերածվում է ընկալվում է որպես հայկական ժողովրդական երգ:

Չարենցի այս բանաստեղծությունը չի մտել ժողովածուների մեջ: Իսկ որոշ երգարաններում այդ երգի խոսքերի հեղինակ է ճանաչվել նաեւ Դավիթ Մայրանը, որը մասնակցել է ֆիլմի նկարահանմանը: Իր հուշերում Դավիթ Մայրանը գրում է. «Պետք է սկսեիք Քուռ գետում ձուկ բռնելու տեսարանի նկարահանումը: Յարկավոր էր Պեպոյի երգը: Յետեւյալ առավոտ երկու տուն բանաստեղծություն հանձնեցի Բեկնագարյանին: Խաչատրյանը հավանեց: Պայմանավորվեցին, որ ժանակավորապես Ա. Խաչատրյանն այս խոսքերի վրա գրի երաժշտությունը: Յետագայում Ե. Չարենցը կտա իսկական երգի խոսքերը՝ արժանի այդ երաժշտությանը»:

Արվեստագիտության դոկտոր Սարգիս Մելիքսեյանը, որ այդ տարիներին ղեկավարել է «Յայկինոյի» սցենարական բաժինը, վկայում է, որ Չարենցը սիրով է ընդունել Պեպոյի երգի համար խոսքեր գրելու Արամ Խաչատրյանի առաջարկությունը: Իսկ հետո այն հանձնվել է Դ. Մայրանին՝ որոշ բառեր վերախմբավորելու նպատակով: «Վերջինս, մի քանի տող վերախմբագրելով, փոխեց որոշ բառեր՝ հարմարեցնելով երաժշտությանը եւ կատարողի հնարավորություններին»: Ի դեպ, բանաստեղծության վերախմբագրման համար եղել է Չարենցի համաձայնությունը:

Յետագայում թե՛ Յայաստանում եւ թե՛ սփյուռքում լույս տեսած երգարաններում տեքստի հեղինակ ճանաչվել է Ե. Չարենցը:

Կոմպոզիտորը, հարազատ մնալով հայկական ժողովրդական երգի մեղեդիներին, ստեղծել է այնպիսի երաժշտություն, որը մշտատես մնացել է ժողովրդի հիշողության մեջ:

Երկու մեծերի բարեկամությունը շարունակվում է: Տարիներ հետո նրանք կրկին հանդիպում են: 1939թ. Մոսկվայում կայանալու էր հայ գրականության եւ արվեստի տասնօրյա փառատոն: Այդ առիթով Ա. Խաչատրյանը նախատեսում է փառատոնին ներկայացնել հայկական ազգային բալետ: Քանի որ երաժշտությունը պետք է լիներ զուտ հայկական, նա 1937թ. գալիս է Երեւան՝ տեղում լսելու եւ ծանոթանալու հայ երաժշտության ու երգերի կատարողներին: Երեւանում կոմպոզիտորը հանդիպում է Ե.

Չարենցին եւ Լեւոն Մաղոյանին: Վերջինս նվագում է դուդուկի վրա «Որսկան ախպեր» ժողովրդական մեղեդին, իսկ Չարենցն էլ երգում է:

Բանաստեղծը քառյակ առ քառյակ բացատրում է կոմպոզիտորին երգի իմաստը եւ ավելացնում, որ բանաստեղծության հեղինակն Ավետիք Իսահակյանն է: Կոմպոզիտորը խնդրում է Չարենցին, որ մեկ անգամ էլ երգի, Չարենցը չի կարողանում, արցունքները հոսում են նրա աչքերից:

Արամ Խաչատրյանը գրի է առնում ժողովրդական երաժշտության այդ մարգարիտը՝ ասելով, որ դա իսկական ժողովրդական ողբերգություն է: Անցան տարիներ: Պատերազմի ավարտից քիչ անց աշխարհը հիացավ Արամ Խաչատրյանի նոր գործերով՝ Երկրորդ սիմֆոնիայով, որի երրորդ մասում կյանքի էր կոչվել Ե. Չարենցի եւ Լ. Մաղոյանի «Որսկան ախպերը»՝ դասականի ճանապարհով դեպի հավերժություն գնացող հայ ժողովրդական այդ պարզ ու խորիմաստ երգը: Դրանով կոմպոզիտորն անմահացրեց ոչ միայն իր ժողովրդին, այլեւ Ա. Իսահակյանին, Ե. Չարենցին եւ Լեւոն Մաղոյանին:

1966թ. մարտի 18-ին երաժշտագետ Մարգարիտա Յարությունյանին ուղարկված նամակում Արամ Խաչատրյանը պատմում է հայ արվեստագետների եւ գրողների հետ ունեցած իր հանդիպումների մասին: Նամակում հիշատակում է Չարենցի անունը: Նույն թվականի մայիսի 11-ին երաժշտագետին ուղղված մեկ այլ նամակում Արամ Խաչատրյանն իր եւ Չարենցի հանդիպումների մասին գրում է. «Չարենցի հետ ծանոթ էի մինչեւ «Պեպոն» գրելը՝ 1922-25 թթ.: Նա լինում էր Մոսկվայի հայկական մշակույթի տանը: Այնտեղ էինք տեսնվում: Յանդիպում էինք Կարո Յալաբյանի հետ: Չարենցը նրա ընտանիքի բարեկամն էր:

Չարենցի կինն իմ ազգականն էր: Պեպոյի երգը ես գրեցի, երբ որ ինձ տվեցին Չարենցի տեքստը»:

1967թ. գարնանը՝ Եղիշե Չարենցի ծննդյան 70-ամյակի օրերին, Արամ Խաչատրյանը երեւանում հանդիպեց աշխատանքային իր գործընկերների՝ կոմպոզիտորների, երաժշտագետների, երաժիշտների ու արվեստի տարբեր բնագավառների ներկայացուցիչների հետ: Յաստանի կոմպոզիտորների միության դահլիճում ծավալված այդ գրույցի ժամանակ, որի ձայնագրությունն այժմ պահպանվում է կոմպոզիտորի տուն-թանգարանում, երաժշտագետ Մարգարիտա Յարությունյանի հարցերից մեկը դարձյալ վերաբերում էր բանաստեղծի եւ կոմպոզիտորի մտերմությանը: Կոմպոզիտորը կրկին արտահայտում է իր հիացական վերաբերմունքը տաղանդավոր բանաստեղծի եւ նրա լեզվագետ կերպարի մասին: Նա նշում է, որ շատ հանդիպումներ է ունեցել բանաստեղծի հետ, ուր երեւում է Չարենց արվեստագետի նվիրվածությունն ազգային մշակույթին եւ մասնավորապես երաժշտական արվեստի հարցերին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԻՑ #104, 04-06-2003

ԱՁԴ

Բնագիտական կրթության հիմնախնդիրներին նվիրված համահայկական III գիտաժողով

«Բնագիտությունը 21-րդ դարում ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ»

ապրիլի 27-29, 2012 թ.

Շուշիի ազատագրման 20-ամյակի առթիվ



Հարգարժան գործընկեր

Հրավիրում ենք մասնակցելու

«Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» խորագրով համահայկական III կրթական գիտաժողովին, որը տեղի կունենա 2012թ. ապրիլի 27-29-ը, Երևանի պետական լսարանում: Կրթական գիտա-ժողովում կքննարկվեն հանրակրթական և բուհական ոլորտներում բնական գիտությունների, նրանց հիմնուցների ուսուցման հիմնախնդիրները: Գիտաժողովին, ստորև ներկայացված պայմաններին համապատասխան, կարող են մասնակցել դպրոց-ների ուսուցիչներ, բուհերի դասախոսներ, քոլեջների դասատուներ, նշված խնդիր-ներով զբաղվող մագիստրոսներ, ասպիրանտներ և կրթության ոլորտի մասնագետներ:

Հասցեն՝ ք. Երևան, Ավան թաղամաս, Ծարավ Աղբյուրի 55ա, ԵՊՀ ՕՔՆՖ

Նախատեսվում է քննարկել հետևյալ թեմաները.

- Ֆիզիկայի և աստղագիտության ուսուցման հիմնախնդիրներ
• Մաթեմատիկայի ուսուցման հիմնախնդիրներ
• Քիմիայի ուսուցման հիմնախնդիրներ
• Կենսաբանության ուսուցման հիմնախնդիրներ
• «Բնագիտություն» ինտեգրացված առարկայի դասավանդման առանձնահատկությունները
• Ֆիզիկական աշխարհագրության ուսուցման հիմնախնդիրներ
• Մաթեմատիկայի դերը բնագիտության ուսուցման գործընթացում
• Բնագիտական առարկաների դասավանդման գործնական ուղղվածության ապահովման ուղիները
• Բնագիտական կրթության ինֆորմատացման հիմնախնդիրներ
• Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները կրթական համակարգում
• Բնագիտական առարկաներից պետական ավարտական և միասնական քննություններին սովորողներին նախապատրաստելու հիմնահարցեր
• Սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության հիմնահարցեր
• Բնագիտական առարկաների դերը ճարտարագիտական և տեխնիկական կրթության համակարգում
• Բնագիտությունը և ռազմագիտությունը
• Օլիմպիադաներ և աշխատանք օժտված երեխաների հետ

Տեղեկատվություն.

- «Բնագետ» հանդեսի խմբագրություն, Երևան, Ա. Մանուկյան 11, քիմիական ֆակուլտետ, հեռախոս 572232, E-mail bnaget@yahoo.com, Կամո Աթայան, 094287888 katayan@ysu.am
• Կրթության ազգային ինստիտուտ, հեռախոս 55 99 28 bnagetconference@aniedu.am
• Գազիկ Մելիքյան, 091473747
• ԵՊՀ, օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետ, Երևան, Ծարավ Աղբյուրի 55ա, հեռախոս 627949, 624385, Գոհար Բաբախանյան, 091548253, gbabakhanyan@mail.ru,

Ձեկուցումների և թեզիսների ներկայացման կարգը

Գիտաժողովին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև 2012թ. ապրիլի 10-ը ներկայացնել հոդվածը տպագրված և էլեկտրոնային օրինակներով: Կրթական գիտաժողովի աշխատանքներին մասնակցել ցանկացողները կազմակերպվեն պետք է ներկայացնեն հետևյալ նյութերը.

- մասնակցության հայտ
• Ելույթի կամ զեկուցման թեզիսները էլեկտրոնային և տպագիր օրինակով՝ մինչև 3 տպագիր էջ ծավալով, Word document ֆայլով:
• Ներկայացման վերջին ժամկետը 2012թ. ապրիլի 10-ն է:
• Ձեկուցումների և թեզիսները ուղղարկել katayan@ysu.am, bnaget@yahoo.com, info@aniedu.am, gbabakhanyan@mail.ru, էլ. հասցեներից մեկին:

Ներկայացվող նյութերի ձևակերպման պահանջները
Հոդվածները պետք է ձևակերպվեն հետևյալ պահանջներին համապատասխան. նյութի ծավալը 3 էջից ոչ ավելի (600բառ), տեքստի համակարգչային ծրագիրը՝ Microsoft Word, տառատեսակը՝ Times New Roman (ռուսերենի, անգլերենի համար) և Arial Armenian (հայերենի համար), տառաչափը՝ 12, տողամիջյան տարածքը՝ 1,5, վերևի, ներքևի և աջ լուսանցքները՝ 2,0, ձախ լուսանցքը՝ 3,0 սմ՝ ստանդարտացված: Հոդվածը սկսվում է վերնագրով, որը գրվում է կենտրոնում՝ գլխատառերով, մուգ: Վերնագրից հետո նշվում են հեղինակի ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը, քաղաքը և կազմակերպությունը՝ աջ

անկյունում՝ շեղատառ: Հոդվածում հստակորեն պետք է ներկայացված լինեն հարցի դրվածքը, կրթական նորույթը, իսկ վերջում՝ օգտագործված գրականության ցանկը և նյութի հակիրճ ամփոփումը՝ մինչև 50 բառ՝ անգլերեն, ռուսերեն կամ հայերեն, կախված հոդվածի շարադրման լեզվից: Տեքստում գրա-կա-նության մեջբերումը նշվում է ուղիղ փակագծերում՝ գրելով գրականության ցանկում համապատասխան աղբյուրի համարը և էջը՝ օրինակ՝ [3, էջ 14]:

Գիտաժողովի աշխատանքային լեզուն հայերենն է, իսկ առանձին աշխատանք-ներ կարող են ներկայացվել ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Գիտաժողովին ներկայացված և գրախոսված նյութերից կիրառարկվի գիտա-մեթոդական հոդվածների ժողովածու՝ համաձայն ՀՀ ԲՈՂ-ի պահանջ-ներին:

Գիտաժողովի կազմակերպման մասին տեղեկատվությունը առաքվում է կրթ-ության մարզային բաժիններ, ԼՂՀ ԿԳ նախարարություն, ՀՀ բուհեր, ինչպես նաև Մմուհ-եր և սփյուռքի հայկական կրթօջախները:

Տեղեկատվությունը տեղադրված է նաև ՀՀ ԿԳ նախարարության www.edu.am, Կրթության ազգային ինստիտուտի www. aniedu.am և ԵՊՀ www.ysu.am էլեկտրոնային կայքերում, «Կրթություն» շաբաթաթերթում, ինչպես նաև www.armedu.am կրթական համալիր էջում:

Գիտաժողովին մասնակցել ցանկացողները լրացնում են համապատասխան հայ-տը և թեզիսները կազմակերպված են ներկայացնում մինչև ս.թ. ապրիլի 10-ը՝ վերը նշված հասցեներով: Թեզիսները, որոնք ներկայացված պահանջներին չեն բավարարում կամ ուղարկվում են նշված ժամկետներից ուշ, չեն քննարկվում:

Գիտաժողովի նյութերի ժողովածուն մասնակիցները կարող են ձեռք բերել տեղում, մասնակիցների գրանցման ժամանակ:

Գիտաժողովի տեղեկատվական հովանավորն է «Կրթություն» շաբաթաթերթը:

ԳԻՏԱԺՈՂՎԻ ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

ՀԱՄԱՅՆՅԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՎ «Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» 20-21 նոյեմբերի 2012թ.

Մասնակցության հայտ

Անուն, ազգանուն, հայրանուն _____
Գիտական աստիճանը, կոչումը _____
Աշխատանքի վայրը, պաշտոնը _____
Աշխատավայրի հասցեն _____
Հեռախոս _____ էլ.փոստ _____

Ներկայացնելու են զեկուցում

այո ոչ
Մասնակցելու են հյուրի կարգավիճակով

այո ոչ
Ձեկուցման թեման _____

Ձեկուցման համար անհրաժեշտ են տեխնիկական միջոցներ (համակարգիչ, պրոյեկտոր, և այլն)

այո ոչ
Ստորագրություն _____
Ամիս, ամսաթիվ _____

ԼՈՒՍԱՐԱՐ
հանրագիր՝
ՍԿԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հիմնադիր՝
«Լուսարար» ՓԲԸ
Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru
Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլոտ» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3080: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 05.03.2012թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: